№ 8. (149) XIV՝ ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԲԼՖՕՐՄՆԵՐՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

ԵՐԵՔ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԻՒՊԱՏՈՍՆԵՐՈՒՆ

Յուլիս 5/18-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Տարօնոյ և Սասնոյ կենտրոնական կոմիտէները գրաւոր կերպով, երեք մեծ պետութիւններու հիւպատոսներուն ներկայացուցին այն գլխաւոր պահանջները, որոնց գործադրութիւնը անհրաժեշտ է, իբրև տարրական պայմաններ, գէթ մասնակի խաղաղութիւն հաստատելու հայաբնակ նահանգներու և յատկապէս այն գաւառներու մէջ, որ վերջին ամիսները ընդհարման և կռուի բեմ դարձած էին։ Ահա այդ յեղափոխական պաշտօնագիրը իր ամբողջութեամբ։

ՊԱՀԱՆՋՆԵՐ. —

ա) Բոլոր բացառիկ ու ժամանակաւոր հարկերուն ոչնչացումը։ Գանձելիք այլազան քուլրքերու փոխարէն իւրաքանչիւր ընտանիքի համար հողային կալուածներու համեմատութեամբ միանգամայն տուրքի մը հաստատումը։ Ինչպէս նաև զինուորական վարձակալութեան (աշար իլ-թիզամը)։ Որ բնաբարութիւն մըն է հողագործի արդար վաստակներուն։

բ) Տասը տարուան համար հարկերէ ազատում՝ հայերուն անտեսակէտն քայքայեալ վիճակը վերականգնելու համար։ Ապառիկներու բաշխումը։ Զօրքեր, ոստիկաններ ու կառավարական պաշտօնեաներ չգործածել տուրքեր հաւաքելու։ Տեղական եկամուտը գործածել տեղական տնտեսական պէտքերուն։

գ) Ինչպէս զինուորական տուրքը և անոր փոխարէն հաստատել ընդհանուր զինուորագրութիւն, հայ զինուորներէն կազմելով առանձին գնդեր։

դ) Դիւղային ազգաբնակութեան խաղաղ կենցաղավարութեանը համար իւրաքանչիւրի բնակչութեան թիւին համաձայն 5-10 պահապաններու նշանակումը, որոնք պէտք է զինուած ըլլան արդապիդ հրացաններով։

ե) Ինչպէս զէնք կրելու իրաւունքը իսլամակրոն տարրերուն համար, որոնք զայն կը գործածեն խաղաղ ժողովուրդը կեղեքելու և փճացնելու հակագալ պարագայի մէջ ամէն կարգի հպատակներու համար արտօնութիւն զէնք կրելու և հաւասարապէս ազատ ըլլալ ինքնապաշտպանութեան իրաւունքին մէջ։

զ) Վերադարձումն այոց այն բոլոր հողերուն, որոնք իպանեներու խուժանը կամ վաճառաւորութիւնը գրաւեր է հայերէն։ Ուստերագրեալ պատերազմէն վերջ թէ բռնութեամբ և թէ զանազան էնթրիքներով։ Վերադարձումը հայ եկեղեցւոյ, այն նախկին վայրերուն՝ դարաւոր ուխտատեղիներու, տաճարներու, վանայարաններու գերեզմանատներու ևն, որոնք հակառակ իրենց նախկին նուիրեալ, գրաւուեր են այս կամ այն թիւրք աղաներէ կամ քիւրդ պէյերէ կամ

է) Վերահաստատումն սահմանագրական կարգերու։ Դատաւանքներու կատարեալ ապատութիւն և հաւասարութիւն։ Հայ եկեղեցւոյ նախկին առանձնաշնորհմանց պահպանումը՝ դպրոցներու, եկեղեցիներու շինութեանց և քարեկարգութեանց համար։ Պատարեալ թոյլատուութիւն հայ ուխտաւորութեան՝ իրենց ազգային վանքերու, և սրբութիւններու։ Տեղական մամուլի հաստատութիւն։

ը) Ազատ իրաւունք անցագրի, առևտուրի, վաճառականութեան, տեղափոխութեան ևն։

թ) Դատաստանական բարենորոգումներ, որով ապահովին ազգաբնակութեան ամէն դասերու իրաւունքներն և կատարեալ հաւասարութեան ապահովութիւնը։

ժ) Բոլոր հայ գաղթականներուն և պանդուխտներուն (օսմ. հողերէ և թէ արտասահմանէ) վերադարձումը. կատարեալ իրաւունք իրենց հայրենի հողերուն տիրելու. վերադարձումն կրճատուած իրաւունքներու։

ժա) Ազատութիւն բոլոր քաղաքական հայ բանտարկեալներու և ամբաստանեալներու ևն։

ժբ) Իրենց չարագործութիւնների սանձարձակ ի գործ դնող քիւրդ հեծելազօրաց արդի աւերիչ կացութեան ընդհանուր կամ փոխարինումը։ Արդիւնք իսպառ վրանոցակոչ քիւրդեր ամարանոցի պատրուակով հայոց պատկանած լեռները չ'իջնեն, սովորութիւն մը, որ ընդհատ էր 94-ի դէպքէն վերջ իրադէներով, սակայն Սասնոյ կառավարութենէ թոյլատրուած է ի վնաս հայերուն, մինչդեռ խեղճ ժողովուրդը ջրկուած է իր ամարանոցներէն ոգտուելէ։

ժգ) Կառավարչապետի մը նշանակումը հայկական վեց նահանգներու համար՝ եւրոպական մեծ պետութեանց հսկողութեան տակ, որ պիտի կատարէ ազգաբնակութեան կողմէ ընտրուած խորհրդին աջակցութեամբ։ Կառավարիչը պէտք է որ քրիստոնեայ ըլլայ։

ժդ) Եւրոպական ինիստ հսկողութիւն (կոնտրոլ) վեց նահանգներու վարչութեան վրայ։

ժե) Ազգաբնակութեան թիւի համեմատ կազմակերպել

ժանդարմներ, որոնց մէջ պէտք է լինին քրիստոնեայ պաշտօնեաներ, այն է՝ եւրոպացի սպաներ, և որոնց վերահսկողութեան տակ դրւի ժանդարմերիի կազմը։

ժզ) Ընդհանուր հատուցում Սասունի և Մշոյ դաշտի հայոց գիւղերուն. գիւղերուն վերականգնումը. անոնց տուներուն շինութիւնը, տարեկան ոռճեսպի, զգեստի, անական պէտքերու, գոյքերու հոգացում՝ ալն, ինչպէս և հողային և մշակական գործիքներ։

Ի դիմաց Տարօնոյ-Սասնոյ Կեղր. կոմիտէներու

ԱՆԴՐԱՆԻԿ, ՍԱՐԳԻՍ, ՏԱՐՕՆԵՑԻ

(Կնիքներ)

Այս պահանջագրին հետ միասին յանձնուած է մանրամասն նկարագրութիւն այն տառապանքներու, որոնց ենթակայ է հայ տարրը՝ թիւրք կառավարութեան կողմէ շարունակ ի գործ դրւող վերդուներու և չարիքներու պատճառով։

Այս չարիքներուն դարման տանելու համար էր, որ հայ յեղափոխութիւնը պարզեց իր դրօշը և հրապարակ ելաւ չարչարուած ժողովրդի իրաւունքը պաշտպանելու և պահանջելու բարենորոգումներու իրագործումը՝ հայկական վեց նահանգներու մէջ։

Դաշնակցական միւնոյն կոմիտէները ուրիշ ծանուցագիր մ'ևս յանձնած են հիւպատոսներուն, որով ազդուրէն բողոքելով Սասունի մէջ զօրանոցներ շինելու դէմ, պահանջած են կառուցման արգելումը, սպառնալով հակառակ պարագային նոր ուժերով դէպքերի վերսկսումը։

Հիւպատոսները այդ բողոքագիրը ուղարկած են դեսպաններուն։

ՏԷՌՕՐԸ ԹՈՒՐՔԱՍՏԱՆՈՒՄ

Երբ 1866 թուին, Ս. Պետերբուրգի մէջ որոտաց կարակոզովի ատրճանակը Ալէքսանդր II-ի դէմ,—ռուս տէռօրական կազմակերպութիւնը, տարուած մօտալուտ յաղթանակի երազներով, հազիւ թէ կարող էր մպպծել, թէ քառասուն տարուց յետոյ նոյն պիտի շարունակուէր անհատական տէռորի սիստէմը, հիմնուած միւնոյն փաստերի հողի վրայ, ուղղուած հայրենիքի դահիճների դէմ և ջատագովուած նոյնպիսի անվեհեր մարտնչողներից։

Վարդագոյն երազները շատ շուտ էքացան, և այսօր, համարեա քառասուն տարի անցնելուց յետոյ, մենք դեռ գտնւում ենք տէռորիստական գաւադրութիւնների մի տենդոտ շրջանում։ Ժամանակը չփոխեց կռւի տակտիկան։

Բռնակալութեան մեքենան անընդհատ նորոգուեց, կատարելագործուեց։ Քառասուն տարուայ ընթացքում միապետութիւնը ասես ուրիշ հոգս չունեցաւ։ Պատմութիւնից չէր նա ուսանում, այլ միայն ասիական վայրենութիւնից։ Վիթխարի երկրի վիթխարի պահանջներով չէր նա տոգորուած, այլ միայն նրանով՝ թէ ինչպէս պահպանել թագաւորող տունը, ինչպէս յաւերժացնել տիրող ռէժիմը, ինչպէս ապահովել ներկայացուցիչներին՝ «նիհիլիզմի» շանթերից...

Եւ միշտ աւելի արմատացաւ տիրող շրջաններում վաղնամի գաւանանքը՝ որ բռնի ուժը միակ միջոցն է այդ գերագոյն պահանջների հանդէպ։ Տագնապի ժամանակ ամէն անգամ հրապարակ էր կոչւում մի «եզակի դէմք», «ամենաթոյր» մի մինիստր, որը գալիս էր լիակատար սպառազինութեան մէջ և ստանձնում էր դիկտատորի դերը։ Կարակոզովի հարուածը 60-ական թուերին ասպարէզ կոչեց տխրահռչակ Մուրավիովին, որը կազմակերպեց մի անօրինակ ռէակցիա։ Կախաղաններ, անվերջ հալածանքներ, բերդարգելութիւններ և աքսորներ։ Մի կատարեալ որսախուճապ՝ ուղղուած ոչ միայն յեղափոխական տարրի, այլև ամբողջ պատամիտ հասարակութեան դէմ։ Եւ գերեզմանական խաղաղութիւնը տիրեց Պետերբուրգից մինչև Վարշաւա։

Յեղափոխական զօրքը աճեց զուգընթացաբար։ Մի տասն տարի յետոյ տէռօրը նորից գլուխ բարձրացրեց, յանձին հռչակաւոր «Նարոդնայա Վոլիա»-ի, և քաղաքական սպանութիւնների շարքը պսակեց 1881-ի մարտ 1-ի շառաչուն գործողութեամբ։ Ռումբը պայթեց, ահարկու որոտումով, միւնոյն Պետերբուրգում և օդը ցնդեցրեց միւնոյն կայսրին, որից վրիպել էր Կարակոզովի գնդակը։

Ռէակցիան նորից հնչեցրեց ահազանգը և նորից նետուեց իր զոհի վրայ, մի այնպիսի մոլեգնութեամբ, որ պիսին էր տեսնուած թերևս նոյնիսկ Մուրավիովի օրով։ Պօբեդոնոսցեվ աւելի բախտաւոր եղաւ իր նախորդներից. նա հնձեց մի ամբողջ սերունդ և ապահովեց «խաղաղութիւնը» ամբողջ քսան տարով...

Խոր, անողորմ հիասթափութիւն տիրեց հասարակութեան բոլոր խաւերին։ Տէռորը վիժեց, «սահմանադրութեան» մասին տածուած յոյները իդերև էրան։ Պիրօվսկայաների ու Ժելիաբովների մեծ յիշատակը յանէտ արձանագրուեց ռուս մտածող երիտասարդութեան սրտում, բայց տէռորիստի հմայքը հետզհետէ նւազեց, «նիհիլիզմը» էքացաւ ասպարէզից։ Նրա տեղը բռնեց այսպէս կոչուած «մասսայական» գործունէութիւնը, որի մենաշնորհը սաանձնեց Սոցիալ-դեմոկրատիան։ Մի գործունէութիւն, որ չունէր իր մեծ արժանաբերութիւնները—յամառ ու յարատև պրօպագանդ և կազմակերպումն բանւորական ուժերի, յանուն ապագայ եղափոխութեան—բայց մի գործունէութիւն, որը այլևս չէր ներշնչում իշխողներին վաղեմի սարսափը, քանի որ մերժում էր տէռորն ու դաւադրութիւնը։

Սակայն—տարօրինակ են հասարակական զարգացման

ելևէջները — տէոօրիական գործունէութեանը վերջակետ էր քսան տարուայ մեռելութիւնից յետոյ վերստին յարութիւն առնել։

Գիտակից տարրերը աճում էին Ռուսաստանի մէջ և դրա հետ միասին միշտ աւելի և աւելի զգալի էր դառնում ֆակատութիւնը քաղաքական պահանջների և երկրի պետական կազմակերպութեան միջև։

Ուսանողական խռովութիւնները ներկայ դարու արշալոյսին եկան ազդարարելու այդ սուր հակասութիւնը և խզելու ըմբոստութեան երկարատև զինադուլը։ Կառավարութիւնը պատասխանեց այդ խռովութիւններին ամենավայրենի կարգադրութիւններով։ Հետևանքը՝ Ռուսաստանի մէջ։ Եւ ահա շատ չանցած՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլեպով սպանուեց տէոօրիստ Կարպովիչի ձեռքով։ Դրանով վերսկսուեց տէոօրի տակտիկը և հին պանծալի „Նարոդնայա Վոլյա“-ն վերակենդանացաւ — աւելի ընդարձակ, ազդեցութիւնլիստական-մարտական ծրագրով յանձին Սոցիալիստական-յեղափոխական կուսակցութեան։

Պայմանները նպաստաւոր էին։ Միապետութիւնը, աւելի քան երբևիցէ, վստահ իր ոստերի վրայ չէր վարանում ամենավայրագ միջոցների առաջ խեղդելու համար հակապետական ամենաթոյլ արտայայտութիւնները։ Բանտերը աշխարհը փոթորկուում էր, ըմբոստութեան ալիքը գրոհ էր տալիս դէպի գիւղերը։ — և ամէն ինչ Ռուսաստանի մէջ ծայրից միւսը, հրացանը նագայկայի անպարիսպ տարածում էին արիւնի և ցասումի։ Ռազմական տրամադրութիւնը աճում էր Թեսալիայում և Սոցիալ-դեմոկրատիայի պաշտպանած դիմադրութեան թէորիան գոհացում չէր տալիս։ Պէտք էր — գէթ երբեմն — արտայայտիչ լինել ժողովրդական արդար ցասումի։ Պէտք էր շանթահարել այնքան արիւնի և կարկամների վրայ տասխանատուներին։

Եւ տէոօրը վերստին ստացաւ քաղաքացիութիւն։ Նա այժմ ընդգրկեց աւելի լայն խաւեր և ընդունեց քրիստոնեական բնոյթ։ Կարպովիչին յաջորդեց Բալմաշով, որի հարուածից շնչասպառ ընկաւ մինիստր Սիպիագին։ Հետևեց մի փայլուն շարք հերոս-մարտիկների, որոնք երկրի այլևայլ կէտերում փորձեր արին ուրիշ դահիճների դէմ։ Ամենց սպանեցին Բոգդանովիչն — ուրիշներին վիրաւորեցին, ահաբեկեցին — Փոն Ֆլեր, Օբոլենսկին, Պոբեդոնոսցևը։

*

Ռեակցիան խելագար էր իր անզօր կատաղութեան մէջ։ Ցարը և „կամարիլյան“ գիւաբները կորցրած, այլ ոչ ձախ էին նետում, գտնելու համար ամենակարող մարդուն, որը աջողէր փրկել միապետութիւնը։

Եւ մարդը գտնուեց, — դա Փոն Պլէվէն էր։ Մի գարշելի, մի դժբնդակ անուն։ Մուրավիովի, Պոբեդոնոսցևի պէս նա ևս ստանձնեց դիկտատորի պաշտօնը և, կարելի է ասել, դերնդփնդեց երկուքին էլ։ Դիկտատորի Մեսեդնիխեան ազնուաբնակ ցեղից։ Հնարագիտութեամբ Պլէվէ հանդէս եկաւ իբրև մարմնացումն ամենաբարոյական միապետականութեան, իբրև ամենազօր մի ժանդարմ։

Երկու տարի իր մինիստրութեան ընթացքում այդ ահարկու ժանդարմը ամբողջ կայսրութիւնը դարձրեց մի վիթխարի ոստիկանատուն։ Կռիւ, անողոք հալածանք յեղափոխութեան ու լիբերալիզմի դէմ։ . . Եւ այդ կռուի մէջ Պլէվէ կանգ չառաւ մինչև իսկ ֆամիլիական մեթոդի առջև։ Նա հրահանգեց ջարդել հրէաներին — „Կիշինեւի — իբրև մի տարի որ չվնանգաւոր“ է պետական տեսակէտից։ Նա բարձրացրեց իր անողորմ մարակը նոյնիսկ այնպիսի տարրերի վրայ, որոնք ցոյց էին տուել դէպի արքայական գահը միմիայն ծնրադիր հաւատարմութիւն։ — Նա նախագահեց հայ եկեղեցական կալուածների առաջնային յափշտակութեան։ Նա սաստկացրեց ճնշման ռէժիմը Փինլանդիայի մէջ, սուր տարածելով այդ խաղաղ, անվնաս ժողովրդի վրայ։

Բախտը ժպտում էր դիկտատորին. տխմար, կամազուրկ վեհապետը և ամբողջ բիւրոկրատիան խունկ էին ծխում նրան։ Պլէվէ „ժանքրել“ էր յեղափոխականներին։ Աւելի՝ ոչ միայն ոչնչացրել էր միապետութիւնը, անմնան չտեսնված կատարելութեան էր հասցրել բռնութեան մեքենան, լրտեսութեան սիստէմը, հալածանքի ռէժիմը։ Նա „ամենազօր“ էր, յաղթական, անմատչելի։ Նա պարունակում էր ամբողջ մտածող Ռուսաստանի խղճմտանքը։ բայց ահա նենգամիտ „կա՛նգ առ“ որոտաց։ Ռումբը ճարճատեց մինիստրական սրահում։ կուրի տակ և երեկոյ գոռոզ դիկտատորը մի ակնթարթում դարձաւ այլանդակած մի դիակ։

Քրէժինդրութեան ահաւոր թափը . . Վաղուց է, ազատութեան բարեկամները անձկերէն սպասում էին այս սարսափելի, բայց և հերոսական, կազդուրիչ շրջանին։ Տէոօրը նշանախօսք է ոչ միայն եւրոպական Ռուսաստանի մէջ, այլև Ծայրերում։ Նա տարածւում է անդիմադրելի կերպով ցարի լայնարձակ կայսրութեան մէջ, Փինլանդիայից մինչև Երասխի ափերը։ Այդ է, որ դժոխային սպրասի է ազդում իշխողների վրայ . . .

Երբ է տեսնուած, որ ընդամենը 40 օրուայ տարածութեան վրայ չորս ականաւոր դահիճներ շանթահարուեն յեղափոխականի ձեռքով։ Պլէվէից քիչ առաջ, Հելսինգֆորսում տապալուեց Փինլանդիայի դիկտատորը Բոբրիկովը և հաջանգրէն շուտով երևան կը գայ մի ուրիշ Շաումանը, որը կ՚ջնջացնէ նրա յիշողութիւնը։ Իսկ Ադրիանոպոլիսում դէպքերը նոյնիսկ ցամաքակալներպարանքն են ընդունում։ Մին միւսի ետևից գետին են փռուում հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները, որոնք դեռ երէկ մասնակից էին մի գարշելի արարքի։

Դեռ թարմ է այն օրուայ յիշատակը, երբ Կովկասեան դիկտատորը հայ տէոօրիստներից դաշունահարուած, արիւնաթաթախ դիմումի էր սրանչաւ դէպի

Մեսեդնիխեան ազնուաբնակ ցեղից։ Հնարագիտութեամբ Պլէվէ հանդէս եկաւ իբրև մարմնացումն ամենաբարոյական միապետականութեան, իբրև ամենազօր մի ժանդարմ։

Երկու տարի իր մինիստրութեան ընթացքում այդ ահարկու ժանդարմը ամբողջ կայսրութիւնը դարձրեց մի վիթխարի ոստիկանատուն։ Կռիւ, անողոք հալածանք յեղափոխութեան ու լիբերալիզմի դէմ։ . . Եւ այդ կռուի մէջ Պլէվէ կանգ չառաւ մինչև իսկ ֆամիլիական մեթոդի առջև։ Նա հրահանգեց ջարդել հրէաներին — „Կիշինեւի — իբրև մի տարի որ չվնանգաւոր“ է պետական տեսակէտից։ Նա բարձրացրեց իր անողորմ մարակը նոյնիսկ այնպիսի տարրերի վրայ, որոնք ցոյց էին տուել դէպի արքայական գահը միմիայն ծնրադիր հաւատարմութիւն։ — Նա նախագահեց հայ եկեղեցական կալուածների առաջնային յափշտակութեան։ Նա սաստկացրեց ճնշման ռէժիմը Փինլանդիայի մէջ, սուր տարածելով այդ խաղաղ, անվնաս ժողովրդի վրայ։

Բախտը ժպտում էր դիկտատորին. տխմար, կամազուրկ վեհապետը և ամբողջ բիւրոկրատիան խունկ էին ծխում նրան։ Պլէվէ „ժանքրել“ էր յեղափոխականներին։ Աւելի՝ ոչ միայն ոչնչացրել էր միապետութիւնը, անմնան չտեսնված կատարելութեան էր հասցրել բռնութեան մեքենան, լրտեսութեան սիստէմը, հալածանքի ռէժիմը։ Նա „ամենազօր“ էր, յաղթական, անմատչելի։ Նա պարունակում էր ամբողջ մտածող Ռուսաստանի խղճմտանքը։ բայց ահա նենգամիտ „կա՛նգ առ“ որոտաց։ Ռումբը ճարճատեց մինիստրական սրահում։ կուրի տակ և երեկոյ գոռոզ դիկտատորը մի ակնթարթում դարձաւ այլանդակած մի դիակ։

Քրէժինդրութեան ահաւոր թափը . . Վաղուց է, ազատութեան բարեկամները անձկերէն սպասում էին այս սարսափելի, բայց և հերոսական, կազդուրիչ շրջանին։ Տէոօրը նշանախօսք է ոչ միայն եւրոպական Ռուսաստանի մէջ, այլև Ծայրերում։ Նա տարածւում է անդիմադրելի կերպով ցարի լայնարձակ կայսրութեան մէջ, Փինլանդիայից մինչև Երասխի ափերը։ Այդ է, որ դժոխային սպրասի է ազդում իշխողների վրայ . . .

Երբ է տեսնուած, որ ընդամենը 40 օրուայ տարածութեան վրայ չորս ականաւոր դահիճներ շանթահարուեն յեղափոխականի ձեռքով։ Պլէվէից քիչ առաջ, Հելսինգֆորսում տապալուեց Փինլանդիայի դիկտատորը Բոբրիկովը և հաջանգրէն շուտով երևան կը գայ մի ուրիշ Շաումանը, որը կ՚ջնջացնէ նրա յիշողութիւնը։ Իսկ Ադրիանոպոլիսում դէպքերը նոյնիսկ ցամաքակալներպարանքն են ընդունում։ Մին միւսի ետևից գետին են փռուում հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները, որոնք դեռ երէկ մասնակից էին մի գարշելի արարքի։

Դեռ թարմ է այն օրուայ յիշատակը, երբ Կովկասեան դիկտատորը հայ տէոօրիստներից դաշունահարուած, արիւնաթաթախ դիմումի էր սրանչաւ դէպի

իր ապարանքը։ Այսօր ահա նոր-նոր ֆարուածներ գալիս են շտկելու այդ վրիպումը։ Ահա Հաջիբենդում, օր ցերեկով, մեծ բազմութեան ներկայութեամբ, գնդակահար է լինում փոխ-նահանգապետ գեներալ Անդրեևը, որը անցեալ տարուայ խաղաղ ցոյցի միջոցին հրացանի դռնեց Գանձակի հայ ժողովրդին։ Ահա ընդամենը մի երկոքին շաբաթ դրանից յետոյ, Թգդիրի հրապարակում սպանուում է մի ուրիշ գազան՝ Սուրմալուի հրչակաւոր գաւառապետ Զգուսլավսկի, որ այդ շրջանի հայ ազգաբնակութեան խարազանն էր տասնեակ տարուց ի վեր։ Ահա մի շարք ցարիշ տեռորներն ուղղուած մարդ պաշտօնեաների դէմ...

Սոսկումն է տիրում դահիճներին։

*

Զարկեցէ՛ք, զարկեցէ՛ք, ժողովուրդը այլևս գութ չունի իր արիւնարբու դարանների դիմաց։ Մենք՝ ռուս, ֆին, լեհ, հայ, վրացի, հրէա, վրէժ ենք ամբարել մեր ճնշուած սրտերի մէջ, թո՞ղն ենք կուտակել բռնակալական սարսափների միջոցին, պէտք է դուրս թափենք, — զարկեցէ՛ք։ Խոհեմները, ծոյլ թէորիաների պտաքեաները կարգալ են վախեցնել ռէակցիայի արհաւիրքներով, փոյթ չէ՝ — զարկեցէ՛ք։ Կորցնելու այլևս շատ բան չէ մնում և ռէակցիան էլ՝ Պլեվէներից սկսած մինչև Գայիցիները՝ զգում է արդէն, որ ինքն է փորում իր սեփական գերեզմանը... Թող տեռորը իշխէ տիրականօրէն թշնամիների վրայ, ցնցէ հոգիները, ջնջէ տայ յեղափոխական տրամադրութեանը, կրթէ մասսաներին։ Եւ թող հայ մարտական կազմակերպութիւնը աւելի և աւելի սեղմէ համերաշխութեան կապը Ռուսաստանի հերոսեղբայրների հետ և թող ընդհանուր ու անդուլ ջանքերով փչեն հրդեհը, որ արդէն սպառնում է լափել բռնութեան երերուն շէնքը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՍԵՓԱԿԱՆ)

Ներկայ հեռագիրները, ոտացած զանազան աղբիւրներից, մենք օրը օրին հաղորդելիք ֆրանսիական, գերմանական և անգլիական մամուլի կարևոր օրգաններին։

ԹԱՒՐԻԶ, 14 յուլիսի

Հայ յեղափոխական ջոկատներից մէկը, ղեկավարութեամբ Դումանի, Սալմաստի վրայով ներս խուժեց Թիւրքիա։ Սահմանագլխից 2 հեռու, թիւրք զօրքը, մարտօրէն տեղեկացած, դիմադրութիւն ցոյց տուեց, պայց ենթարկուեց շատ մեծ կորստեան։ Հայերը, որ կուում էին հերոսաբար, միայն 2 զոհ ունեցան։

ԹԱՒՐԻԶ, 12 յուլիսի

Դիլ-Քիլիսէյի հայ ժողովուրդը ենթարկուեց թիւրք զինուորների և քրդերի յարձակման։ Կռիւը տեւեց, կանայք հեռաձգեցին գրանցարութեան։ Թրքական-անգլիական զինները մեծ յուզմունք պատճառեցին ամբողջ գաւառում։ Դրժխնդին լսելու հաւանը՝ շատ շուտով երևան եկան յեղափոխական երկու խմբեր՝ «Դաշնակցութեան» դրօշի տակ։ Առաջինը յարձակուեց Մօսուլի թիւրքաց զօրանոցի վրայ և մեծ վնաս պատճառեց։ Երկրորդը Միհրանի խմբապետութեամբ պատրաստուում է յարձակուելու Իշ-Քիլիսէի վրայ։

ԵՐԵՒԱՆ 16 յուլիսի

(Թաւրիզի վրայով)

Հայ ֆայտակների խումբը, Վահանի ղեկավարութեամբ, յուլիսի 12-ին յարձակում գործեց սահմանագլխի թիւրքաց Զօր պահականոցի վրայ, Ալաշկերտի շրջանում։ Յանկարծակի դիմադրութիւնից յետոյ՝ թիւրք զինուորները մեծ չարչարանք կրեցին։ Պահականոցը քանդուեց ռումբերով։

ՈՒՐՄԻԱ, 28 յուլիսի

(Չեղոք-եւրոպական ճանապարհով)

Սաուջից և Մուշից յետոյ՝ թիւրք կառավարութիւնը նոր բռնութիւնների կենտրոնն է դարձրել Ալաշկերտը։ Թիւրք զինուորները երկու անգամ յաղթուեցին հայկական յեղափոխական խմբերի ձեռքով և այժմ խոյս են տալիս նրանց հետ բռնուելուց ու իրենց վրէժը առնում են անզէն, խաղաղ ժողովրդից։ Քրդերի և զինուորների բռնութիւնն ամենամասսայերը սոսկալի են։ Զէյալի գիւղի Ուշիրէթը գնում է դէպի Ալաշկերտ՝ մամենակցելու կոտորածին։ Երզրումի եւրոպական հիւպատոսների միջամտութիւնը, որին ժողովուրդը յուսով սպասում էր, տեղի չունեցաւ։ Յեղափոխական հայ խմբերը վճռել են պաշտպան կանգնել ժողովրդին և կռիւ բռնել կոտորողների հետ։

ՄՈՒՇ, 15 յուլիսի

(Աւոֆիայի վրայով)

Չը նայած եւրոպական հիւպատոսների ներկայութեան, թիւրքերը շարունակում են կոտորել, թալանել և այրել։ Մուշի գիւղակայքում՝ Գոմեր, Դրինիգ, Տատրագոմ, Շէյխ-Իսուֆ և Ալիտան գիւղերը համարեա ամբողջապէս քանդուած են։ Օրեզգոմկ գիւղում սպանուած են՝ 19 հայ; Տերքրանք՝ 9, Գեղաշէն՝ 8։ Շատ դիակներ կան, որ մնում են անթաղ։ Եւրոպական հիւպատոսները յաջորդ վկայագիրներում արտամաշ տեսարանների, առանց կարողանալու մի բան անել։ Թիւրք ոստիկանութիւնը, յեղափոխականներին որոնելու պատրւակով, ոճիրներ է գործում։ Թոյլ չեն տալիս հայերին յարաբերութիւն ունենալ հիւպատոսների հետ, որոնք շրջապատուած են լրտեսներով։

ԹԻՖԼԻՍ, 16 յուլիսի

(Թաւրիզի վրայով)

Հայ յեղափոխականների երկու խումբ, բաղկացած 61 հոգուց, որոնց մէջում և մի հասակաւոր քահանայ, մի օֆիցէր, բժիշկ, վիրաբոյժ իւնկեր, Մոսկուայի հիմնարկարանի երկու ուսանող և բանականաչափ ուրիշ ինտելիգենտ անձինք, յուլիսի 15-ի գիշերը կռիւ են բռնում Զարդանիի գիւղի վաւերակների մօտ, Երզրումի վիլայէթում, թիւրք սահմանապահ զինուորների և քրդերի հետ։ Հայդուկները՝ բաժանուած երկու խմբի, մի միաւոր տալով և բազմաթիւ զոհեր առնելով թշնամուց՝ կռուում են մինչև կէսօր։ Այդ ժամանակ Օլթիի շրջանի ռուսական սահմանագլխից՝ կօզակները պատուիրուեցան խաղաղեցնել զինուորներին, թող աւելի քան 300 հոգի, հրամանատար Բիկովի մի քանի օֆիցէրների առաջնորդութեամբ, մտնում են թիւրքաց հողը և շրջապատում հայկական խումբը և տեղամ խնամ կրակ։ Հայերը՝ չնայելով իրենց աջող զիրքերին, ոչ մի գնդակ չեն արձակում ռուսների վրայ և շարունակում են կռուել թիւրքերի հետ։ Քիչ անցած ուղարկում են մի պատգամաւորի ռուսների մօտ, և բացատրելով իրենց վրայ գրգռելու պատճառները՝ խնդրում են դադարեցնել հրացանաձգութիւնը։ Պատգամաւորը

կալանաւորու�։ Ուղարկւում է երկրորդը։ Նրա հետ միասին վայրմունքը՝ Ապա քահանան մի ծերին խաչ, միւսում՝ սպիտակ դրօշակ, դիմում է դէպի ռուս զօրքերը։ Հայց դեռ տեղ չհասած՝ ստորաբաժ զնդակահար է լինում ռուսներից։ Ի վերջոյ ինքը խմբապետը իր ընկերներով սպիտակ դրօշակը պարզած, իջնում է դէպի ռուսները, բայց սրանք նրան էլ զնդակահար են պնում ընկերների հետ։ Մնացածները պտիպլած են լինում փախուստ տալ։ Ռուսաց կօզակները անպատմելի անգթութիւն են կատարում։ Մանրամասները նամակով։

ՄՈՒՇ, 24 յուլիսի
(Սոֆիայի վրայով)

Ստացւեց տուլթանի իրադէ՝, որով թոյլատրւում է սահմանցիներին դառնալ իրենց տները։ Դա մի նոր խարեբայութիւն է, Եւրոպան մոլորեցնելու նպատակով։ Տեղական մեծագոյն իշխանութիւնները ամէն վերայ աշխատում են արգելել Ապասուն վերադարձը։ Գործ են դնում սպանութիւններ և ծեծ։ Դաշտում մնացողներին խոստանում են ամէն տեսակ դիւրութիւններ։ Իրադէի հրապարակելուց զուգադիպեցին կոտորածներ մի քանի գիւղերում։

ԷՐԶՐՈՒՄ, 2 օգոստոսի
(Կարսի վրայով)

Հակառակ սամոնցիների բողոքի և հիւպատոսների նկատողութեան՝ կառավարութիւնը ծեռնարկեց զօրանոցների կառուցմանը Սասունի գլխաւոր կէտերում։ Շինւում են չորս մեծ և չորս փոքր զօրանոցներ։ Դժգոհութիւնը յարատևում է։ Ժողովրդին ոչինչ օգնութիւն չէ տրւում տները վերաշինելու։ Օրական նպաստը վնասուածներին 10 փարայից չէ անցնում։ Գրսից դրամական աշակցութիւն անհրաժեշտ է։

ԹԻՖԼԻՍ, 2 օգոստոսի

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Առաջին ուղարկեց մի յատուկ պատգամաւորութիւն, որ կազմված էչՊարսկաստանի-Հնդկաստանի և Ամերիկայի հայոց առաջնորդներ՝ գերապատիւ Այվազեան և Սարաճեան եպիսկոպոսներից՝ բողոքելու Բերլինի դաշնագիրը ստորագրող կառավարութիւնների առջև՝ թրքական գազանութիւնների դէմ, որ վերջերս կատարեցին Հայաստանում և մասնաւորապէս Սասուն, Մուշ, Ալաշկերտ, Վասպուրական։ Ազգային անկախութիւն չէ, որ պահանջում է հայոց եկեղեցու հոգևոր պետը, այլ եւրոպական պետութիւնների վաղուց իվեր արած խոստումների իրագործումը. — զոյութեան տարրական իրաւունքներ, վերադարձ գաղթականների և գրաւած գոյքերի, ազատ շրջագայութիւն երկրի ներսում և դուրսը, ընդհանուր պմնիստիա, ազատութիւն պաշտպանելու իրենց իրաւունքները և բողոքելու անարդարութիւնների դէմ, ինքնապաշտպանութեան իրաւունք ընդդէմ քիւրդերի, չէրքէզների ու մահմէտական ֆանատիկոսութեան, և եւրոպական կօնտրոլ՝ խոստացված ռէֆորմները իրագործելու համար։ Պատգամաւորութիւնը պիտի այցելէ Պարիզ, Լօնդօն, Բերլին, Վիէննա, Հռոմ, Պետերբուրգ, Վաշինգտօն։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻՒ

„ՈՐՍԿԱՆ“ ԽՄԲԻ ԿՌՒԻԸ ԶԱՐԴԱՆԻՍԻ ՄՕՏ

2 յուլիս, 1904

Յունիսի 30-ն էր։ Հայկական աշխարհի զանազան ծայրերից եկած 61 հայ քաջեր, հաւաքված Օլթիի շրջանի .... գիւղը՝ սպասում էին զինուորական խորհրդի վերջնական որոշմանը։

Գնում էինք կատարելու մի խոշոր ձեռնարկ, որ երկար ժամանակ խնամքով ուսումնասիրված ու կազմված էր։

Մինչ երկու խմբապետները՝ Որսորդն ու Թորգոմը՝ զբաղված էին զինուորների մանրամասն դասաւորութեամբ, խմբի քահանան՝ յիսնամեայ Տէր Ղազարը, որ ուխտաւոր էր վրէժխնդրութեան Աստծուն, երիտասարդական աշխոյժով „նշխար“-ի պատրաստութիւն էր տեսնում։ Երեկոյեան պատարագ պիտի լինէր խմբի զինուորներին հաղորդելու համար։

Գիշերուայ ժամը 12-ին սկսւեց ժամերգութիւնը։ Հայ քաջերը հետզհետէ հաւաքւեցին եկեղեցի և ծանօթակներով շարւեցան սեղանի առջև։ Խմբի դրօշակները դրված էին սեղանի վրայ՝ պատարագից վերջը օծելու համար։

Գիւղական եկեղեցու համեստ պատերի մէջ պատարագիչ Ֆէդայի քահանան մարմնացած ջերմեռանդութիւն էր ներկայացնում։ Եկեղեցում տիրում էր խորհրդաւոր լռութիւն։ Պատարագից վերջ դրօշակները մեռոնով օծեցին, և հայ զինուորները հաղորդւեցին ու երդւեցին դրօշակների վրայ։

Լուսաբացին մօտ էր։ Խմբիւ պատրաստված էր զինուորներին իրենց բնակարաններից դուրս չգալ. միայն տասնապետներին էր թոյլատրված, տեղացիների տարազ հագած, դուրս գալ տասնեակների պէտքերը հոգալու համար։ Նոյն այդ միջոցին Երկու խմբապետները՝ Որսորդն ու Թորգոմը՝ խմբի երկու բժիշկները՝ Սիմակն ու Մարտինը, նոյնպէս և Կ. Կոմիտէների ներկայացուցիչները հաւաքւել էին մի ուրիշ մեծ մարագ, որտեղ գտնւում էին ռազմամթերքն ու իրեղէնները, և համապատասխան կարգադրութիւններ էին անում։ Առաւօտեան ժամը 8-ին իւրաքանչիւր տասնեակի շորերը, հրացանները և փամփուշտները բաժանւեցին։ Իւրաքանչիւր զինուոր վերցնելու էր՝ հրացան (բերդան 250 փամփուշտով կամ մօսին 450 փամփուշտով), երկու հատ ռումբ, դաշոյն կամ ատրճանակ, ութ ֆունտ հալվայ, վիրակապեր և ճանապարհորդական մանր իրեր։ Վերջինները դարսված էին մէջքի պայուսակների մէջ։

Բոլոր զինուորները բաժանւեցին երկու խմբի, որոնցից մէկի խմբապետն էր Որսորդը, իսկ միւսին՝ Թորգոմը։ Ամէն մէկի խումբը բաղկացած էր երկու տասնեակից և տասնեակը 14 զինուորներից և 2 բեռնակիրներից։ Երեկոյեան, արևը մայր մտնելիս, բոլոր զինուորները դուրս եկան մի ձորակ և նկարւեցին։ Յայտարարւեց զինուորական խորհրդի վճիռը. որոշված էր, որ երեկոյեան ժամը 9-ին խմբերը դուրս պիտի գան գիւղից։ Բոլոր տասնեակները ժամը 8-ին արդէն կազմ ու պատրաստ սպասում էին հրամանի։ Զը նայելով, որ կարգադրված էր արգելել գիւղացիներին վերջին րոպէին հաւաքելու, բայց ամբողջ գիւղը լցւել էր հաւաքման տեղը։ Սկսւեցին „մնաս բարովի“ ջերմ համբոյրները և ոգևորիչ բարեմաղթութիւնները... Անթիւ բերաններ կրկնում էին. „Յաջողութիւն ձեզ, հայ քաջեր, բարի՛ ճանապարհ ձեզ, անձնուէր հերոսներ“...

Գիշերը մութ էր, և ընդհանուր խաղաղութիւն խանգարողը մեր ոտների ու զէնքերի ձայնն էր։ Անցանք մէկ բլրաձիր շարքից միւսը, բարձրացանք փոքրիկ սարեր և հասանք անտառը։ Ճանապարհին մեզ ոչ ոք չպատահեց և աջողութեամբ անցնելով ռուսական սահմանի մօտից, բարձրացանք դէպի աւերակ Զարդանիսի աղբիւրը։

Աքդէն լքնանալու մօտ էր։ Խմբապետը կարգադրեց, որ աղբիւրից բարձրանանք 100-150 քայլ և հանգիստ առնենք առանց զինաթափ լինելու։ Ռուսական սահմանագլխի № 68 սիւնից մինչև վերստ հեռաւորութեամբ Թիւրքաց հողի վրայ կանգ առնինք հանգստանալու։ Բոլոր զինուորները նստելու նստեցան յոգնածութիւնից քնեցին։ Խմբապետի կարգադրութեամբ ամէն մի տասնեակ միմի պահապան էր դրել հսկելու։

Ահա այդ միջոցին մի պատահականութիւն տակնուվրայ արեց այնքա՞ն լաւ սկսած գործը։ Ահա ինչպէս։ Թեռնակիրներից երկուքը հոգի յետ էին մնացել և աղբիւրի մօտ ջուր խմելուց յետոյ անխոհեմաբար հենց այնտեղ էլ, ջրի մօտ, պառկել քնել էին, պայուսակները հանելով վրաներից։ Զորս մագլցող ռուս սահմանապահ զինուորներ, պատահմամբ գալիս են աղբիւրի մօտ ջուրը խմելու և նկատում են քնած կամաւորներին։ Ռուս զինուորներից մէկը գողանում է պայուսակը և փախչում պահակատից։ Քնածներից մէկը արթնանում է և նկատելով պնդածը՝ ձայն է տալիս ընկերոջը, և միասին փախչում են դէպի այն բլուրը, որտեղ գտնւում էր ամբողջ խումբը, բոլորովին ուշադրութիւն չդարձնելով, որ մնացած երեք ռուս զինուորները հետևում են իրենց։ Զորրորդ տասնեակի պահապանը հեռուից նկատելով ռուս զինուորներին՝ անմիջապէս իմաց է տալիս խմբապետներին, որոնք և որոշում են աւելի խորը գնալ, դէպի Թիւրքիա, որպէս զի ռուսները չհասնեն և արգելք չլինեն։ Խումբը սկսում է շարժուել դէպի ներս և բարձրանալ յարմարագոյն գիրքերը։

Եւ մինչ մենք 3-4 վերստ սահմանից անցել էինք, նկատեցինք, որ ռուսական մագլցող և պահմանապահ զօրախմբերը մօտ 150 հոգի, մեզ հետապնդում են։ Տեսնելով, որ ոտքները մեզ վրայ կրակում են, խմբապետները որոշեցին երկուքի բաժանուել։ Մի մասը իր տասնեակներով աւելի առաջ գնաց ու դիրք բռնեց Ղաբաքիոզագի քարուտ, իսկ Թորգոմը՝ իր զինուորները երեք մասի բաժանեց և յարմարը դիրքեր բռնեց ռուսական սահմանագծից մօտ 2½ վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Լիրկ բլրի գագաթներին։ Ռուս զինուորները մեզ վրայ կրակում էին բարձրից, բայց մենք չէինք պատասխանում, որովհետև խմբապետները արգելել էին և շարունակ ձայն էինք տալիս նրանց, թէ „մենք ձեզ հետ գործ չունենք“։ Սակայն նրանք չէին լսում, կամ չէին ուզում լսել և հետզհետէ պատարանալով շրջապատում էին Թորգոմի դիրքերը։

Յայտնեց, որ դրսա հրամայողը՝ անմիջապէս վարդ էր ուղարկել Թիւրքաց զինուորների մօտ, որպէս պատրաստ լինեն ֆէդայիներին դիմաւորելու։ Առաջուան ժամի 7-ն էր, երբ Որսարդի դիրքի վրայ տաճկական զօրքը կրակ բացեց։ Խմբապետը հրամայեց կրակ բանալ Թիւրք զօրքերի վրայ։ Հրացանաձգութիւնը սկսեց „Կուռեցէք, տղերք“ երգով և պատերազմական փողով։ Դրօշակը պարզեց, և բոլոր դիրքերից արձագանք տուին՝ կրկնելով նոյն երգը։ Կռիւը հետզհետէ տաքանում էր, և Թիւրքաց զօրքերը պատնեակ զոհեր տալով՝ յետ էին փախչում։ Եւ մինչ մենք աջողութեամբ կռուում էինք Թիւրք զօրքերի դէմ, ռուս զինուորները աւելի և աւելի ստւարանում էին ու մօտենում մեր դիրքին։

Ճաշից յետոյ խմբապետ Թորգոմը նկատելով, որ ռուս կօզակների ահագին խումբը շրջապատում է մեզ, զուարթում է տասնապետ Անդրանիկին զօրքի հրամանատարի մօտ ասելու՝ „Մենք ձեզ հետ կռիւ չունենք, ձեր սահմանից դուրս ենք, գնում ենք Թիւրքաց հողի ներսը և կռուելու ենք Թիւրքի հետ, ուստի խնդրում ենք՝ ցնա՛ քաշէք ձեր զօրքը“։ Անուշաւանը գնաց և էլ չվերադարձաւ։ Յետոյից նկատեցինք, որ նրան լսեցին մօտ 15 րոպէ, մի ահ ժամանակ դադարեցրին հրացանաձգութիւնը, բայց չանցած կէս ժամ, մագլցող զօրախումբը միանգամից կրակ բացեց մեզ վրայ։ Յետոյ իմացուեց, որ Օլթիից եկել էր սահմանապահ զօրքերի այդ մասի հրամանատար Բիկովը, և նրա հրամանովն էր, որ զօրքը սկսեց մեզ վրայ կրակ բանալ։ Խմբապետը ոչ զարկեց երկրորդ պատգամաւորը՝ Լևոն Բալանթարեանին նորը յայտնելու։ Պատգամաւորը գնաց։ Բոլոր սպանները հաւաքեցին նրան չուրջը և նրան կէս ժամի չափ լսելուց յետոյ, երկու զինուորի հետ միասին ուղարկեցին պահակատից։ Հասնելուց ետոյ՝ նրանց պատերազմական փողով և կօզակներն ու սահմանապահները երեք կողմից „ուռա“ գոչելով՝ կրակ տեղացին մեզ վրայ։ Մեր դիրքերը բաւականին լաւ էին և այդքան գնդակներից միայն մէկի թեւը վիրաւորեց։ Մենք չպատասխանեցինք։

Իսկ չորրորդ կողմից Թիւրք զօրքերի մի սաւար խումբ, ձորակի միջով բարձրանում էր մօտակայ բլուրը։ Խմբապետը հրամայեց Թիւրքերի վրայ կրակել և նրանք էլ մի ռումբ առնելով՝ նետեց նրանց մէջ։ Հինգ-վեց հոգի զոհ տալով Թիւրքերը յետ փախան, բայց քիչ անցած՝ սիրտ առնելով ռուսներից և հետզհետէ միանալով նրանց հետ, առաջ եկան հայերին ոչնչացնելու համար։ „Խաչն“ ու „Պահիկը“ գրկեցին։

Դէպքերը թափւում էին կանխի պէս։ Առաջին տասնեակի դիրքը խաղնեց և ֆէդայի-քահանան, որ տասնապետ էր, կարգադրեց, որ դուրս գան Պրիրքից և մօտենան խմբապետի դիրքին, որը աւելի ամուր էր։ Ինքն էլ դիրքը ձգելով, խաչը վեր բարձրացրած՝ ուղղեց դէպի ռուսները, իբրև երրորդ պատգամաւոր, բայց խաչն էլ չ՚օգնեց,—Տէրտէրը գնդակահար ընկաւ մի ռուս զինուորի ձեռքից։ Դրանից յետոյ կռիւը աւելի ևս տաքացաւ։ Տղերքը բարձր ձայնով կրկնելով ռուսերէն՝ „գանիրձենկը, դուք ինչո՞ւ էք կրակում, մենք ձեզ չենք պատասխանում“, դառնում էին դէպի Թիւրք զօրքերը։ Միանգամից բոլոր դիրքերից կրակում նրանց վրայ։ Խմբապետները խստիւ արգելել էին ռուսների վրայ կրակ բանալ, բայց ռուսների գնդակներից հետզհետէ ընկնում էին մեր ընկերները մեր աչքի առջև...

Ժամը 4-5-ին, աւելի ստւարացած Թիւրք զօրքը մի կողմից և միւս կողմից էլ ռուսները՝ շրջապատեցին մեր դիրքերը և աւելի ու աւելի սեղմելով մեզ՝ սկսեցին քշել դէպի ձորը։ Թիւրքերը հետզհետէ սպառնալից էր դառնում, և զինուորներից ամէն ոք աշխատում էր ապահով դիրք գտնել ու թագնուել։ Խմբապետը նկատելով, որ այլևս ազատելու հնարաւորութիւն չկայ, ծանծնատուր լինելու փորձ փնտրեց, բայց գազանացած ռուս և Թիւրք զինուորները չէին լսում։ Վերջինների գնդակներ էին թափում։ Խմբապետը դրօշակը առնելով 10-12 ընկերներով, գնդակների տարափի տակ գնաց դէպի ռուսաց զօրքերը՝ ծանծնատուր լինելու նպատակով, ռուսները՝ բաւական մօտ թողնելով, միանգամից կրակեցին և 10 հոգի գետին գլորեցին, որոնց մէջ և Թանկագին Թորգոմին, Դաշնակցութեան դրօշը բերողին։ Զինուորները

տեսնելով իրենց խմբապետի ընկնելը, դուրս են գալիս դիրքերից և զենագան կծիկներ փախչում, — ոմանք գնդակահար ապանում են, ոմանք վիրաւորւում և ոմանք էլ փախչելով ազատւում են անտառի մէջ։

Մինչ Թորգոմի մատնեակները այս տեսակ տագնապալի դրութեան մէջ էին, Որսորդը իր տամնեակներով դեռ ապատ լինելով նենգ դրւանների գնդակներից՝ զուտն ոգևորութեամբ կռւում էր տաճիկ վախկոտ զօրքերի հետ, ոմանք սիրտ առնելով «ռուս եղբայրների» այդ նանապատի ծգնութիւնից, աւելի և աւելի յանդուգն են դառնում և Որսորդին շրջապատում են երկու կողմից։

Որսորդը նկատելով, որ այլևս անհնարին է շարունակել դիմադրութիւնը, հրամայում է դուրս գալ դիրքերից և փախչելով ազատել կամ գոնէ ընկնել ռուսների ձեռքը, կարծելով թէ նրանք կը խնայեն իրենց։ Այդ միջոցին ընկերներից շատերը զոհւում են, իսկ ինքը Որսորդը երկու վերք ստացած՝ դեռաշարունակում է կռիւը, հետզհետէ ձորը իջնելով։ Մօտենալով իրեն ծանօթ մի դուս զինւորի, ուզում է անձնատուր լինել, բայց զինւորը կրծքից վիրաւորում և գլորում է քաջ ֆէդայուն։ Մի ուրիշ ֆէդայի զինաթափ լինելով փախչում է դէպի ռուսները։ Վերջինները բռնում են նրան և թիւրք զօրքերի խնդիրքով յանձնում նրանց։ Թիւրքերը երիտասարդին տանում են մի քանի քայլ հեռու և ռուս զինւորների աչքի առաջ պառկեցնում ու ոչխարի պէս մորթում են...

Մինչև երեկոյեան ժամը 7-ը դեռ ևս շարունակւում էր հրացանաձգութիւնը։ Ժամը 7-ին ռուս և թիւրք զօրքերը խառնւած փչում են պատերազմական փողը և «առշբաբամ» և «ուրա» աղաղակելով գրաւում դիրքերը, և այնտեղ յաղթական ժպիտը երեսներին միմանց պատմում են իրենց քաջագործութիւնները։ Թիւրք հրամանատարի կարգադրութեամբ «սալդատ կարտաշներին» տաճկական կօնեակ են հրամցնում ի նշան երախտագիտութեան, ապա իրար համբուրելով բաժանւում են, դուրսները դէպի ռուսական սահմանագիծը, իսկ թիւրքերը իրենց պահականոցները։ Վերադարձին ռուս մագլցող կօզակները գայլանացած՝ կիսամեռ վիրաւորներին սուինով ծակոտում են կամ գլուխները քարերով ջախջախում, դիակները բոլորովին մերկանդամ ձգում...

Մութը վրայ է հասնում, զօրքերը քաշւում են իրենց բնակարանները, թողնելով անտառում 27 սպանած և տպնելով իրենց հետ 6 վիրաւոր ու 14 գերիներ։ Ինն հոգի կարողանում են պահել և գիշերով անցնելով սահմանը՝ ազատւել։ Հինգ հոգի էլ սպանւում են Որսորդի դիրքում, թիւրքերի գնդակներից, և դիակները տարւում Ղալա-բօղազ թրքական պահակոցը։

Սպանւածների մէջ են՝ ԹՈՐԳՈՄԸ, ՈՐՍՈՐԴԸ, ալէքսանդրօպոլցի ՎԱՂՕՆ, զոյուճուղցի ՏԷՐ-ՂԱԶԱՐԸ, ախալցխացի ՍԻՍԱԿԸ, ալէքսանդրօպոլցի ՄԱՐՏԻՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԸ, խագբեցի ԲԱԳԴԱՍՐ. և ևս։ Սպանւածները, բացի հինգ հոգուց, բոլորն էլ ընկել են ռուսների գնդակներից։ Այդ դէպքի մասին [illegible] Բրբ-կէ հողից, մօտ 2-3 վերստ հեռաւորութիւնից և թաղեր տուին իրենց սահմանի մէջ։

Գաւառապետը մեղադրում է պահմանապահ զօրքի հրամանատար Բիկովին այն բանի մէջ, որ նա անցել է ռուսական սահմաններից և մտնելով թիւրքաց հողը՝ անմեղ տեղը սպանել է այդքան մարդիկ, մինչդեռ նրանք թրքաց հողումն էին և ռուսաց սահմաններից դուրս։ Իսկ Բիկովը մեղադրում է գաւառապետին թշնամութեան մէջ, ասելով, որ նրա գաւառում ենթագին թիւով մարդիկ են զինւում, և նա ոչինչ լուր ու տեղեկութիւն չունի։

Նպահանգապետը գնաց դէպքի տեղը, քննութիւն է սկսւածը, իհարկէ, ճշմարտութիւնը երևան հանելու փոխարէն՝ պիտի խճճի հարցը, արդարացնելու համար ռուս պաշտօնեաներին, որոնք թիւրքական գազանութեան ներկայացուցիչների հետ ձեռք ձեռքի տւած՝ կատարեցին ստոր անգթութեան մի զզւելի գործ։ Եւ օրպիսի սրտցաւին բարեկամութիւն թիւրքերի հետ՝ հայկական ուժը խորտակելու համար։ Ռուս զինւորականներն էին, որ տեղեկացրին խմբի անցնելը, նրանք էին, որ սիրտ և թև տւին սուլթանի զինւորներին և վերջումն էլ՝ թիւրք պաշտօնեաների հետ կեր ու խում սարքեցին՝ թափւած արիւնը տօնելու համար...

Հայերի ասպետութեան պատասխանեցին ստորութեամբ։ «Եթէ հայերը կամենային, ասել է մի ռուս զինւոր, մեզ բոլորիս կը կոտորէին, բայց նրանք մի հատ գնդակ էլ չարձակեցին մեզ վրայ»։ Բայց ի՞նչ օգուտ այդ ցուցմունքներից։

Օլթիի շրջանի ժողովուրդը սոսկումի մէջ է անցած-դարձածից։ Ա՜խ քաջերի տխուր մահը՝ յուզել է ամբողջ գաւառը։ Որքա՜ն պատրաստութիւն, որպիսի՜ անձնուիրութիւն և ի՜նչ արտասւելի վախճան։ Քաջերի մահը վնաս է կանչում։

ՄՕՍՈՒՆ-ՁՕՐԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

14 յուլիս, 1904

Յունիսի վերջերին քրդերի և թիւրք զինւորների յարձակումը Իւշ-Քիլիսէի, Ղումլիպուճախի և Ղարաբազարի վրայ ստիպեց «Դաշնակցութեան» ... կոմիտէին հիմնովին փոխել իր ծրագիրը և երկու արշաւախումբ հանել դէպի Ալաշկերտ։

Այդ երկու խմբերը՝ «Արտաւազդ» և «Մասիս»՝ յուլիս 11-ի գիշերը ապահով անցան Զնգալ կոչւած լեռնակատարով Հին-Բայազէդի գաւառը։

Յուլիս 12-ի առաւօտեան, «Մասիս» խումբը, բաղկացած 60 հոգուց, համաձայն նախօրօք կազմած ծրագրի՝ Գայլ-Վահանի խմբապետութեամբ յարձակւում է սահմանից երեք ժամ հեռաւորութեան վրայ գտնւող Մօսուն գիւղի թիւրքաց զօրանոցի վրայ, ուր տեղական 50 զինւորներին նախընթաց օրը աւելացել էին մօտ 200 նորեկ զինւոր, շնորհիւ Իգդիրի գաւառապետ Բօգուսլավսկու լրտեսութեան։ Պահապան զինւորը նկատելով յարձակւողներին՝ ձայն է տալիս և անմիջապէս սպանւում վայրագ «Խենթ»-ի գնդակից։ Հրացանի ձայնից զինւորները վեր են թռչում։ Այդ միջոցին զօրանոցի տանիքը բարձրացած երեք ռմբաձիգները նետում են հինգ ռումբ և [illegible] մեծամանակ սեղաւում է հրացանաձգութիւնը։ Զինւորներից միայն մի մասին է յաջողւում փախչել, ծպկելով զօրանոցի ետևի պատը։

Հետոյով իմացւում է, որ հայոց տներում ևս զինւորներ են տեղաւորւած, նախընթաց օրւանից։ Յարձակումը տեղի է ունենում և տների վրայ։ Սարսափահար թիւրք

զօրքը և ոչ մի գնդակ չէ կարողանում արձակել աշխատում է միայն փախուստ տալ և գլուխը ազատել, բայց դա շատ քչերին է յաջողւում։ Մերոնցից գիւղում սպանւում է մէկը՝ միւսը վիրաւորւում։

Հրացանաձգութեան ձայնից՝ մերձակայ Քորուն հայ գիւղի թիւրք զինուորները, թւով 25, փախչում են։

Երբ լուսանում է, և խումբը սկսում է դիրքեր բռնել, տեղի է ունենում թիւրք զօրքի և քիւրդ աշիրէթների խուժումը։ Սկսւում է մի տևողական կռիւ, որի ժամանակ բազմաթիւ զինուորներ և քրդեր սպանւում են։ Կռւի տաք ժամանակը զոհւում են խմբապետ ՎԱՀԱՆԻ (ամերիկահպատակ Մինաս Դոլբաշեան — Դրախտ), նրա օգնական ԿԱՊԻՏԱՆ-ԲԱԲԿԻՆԸ (պահեստի սպայ) և մի երկու ընտիր տղաներ։

Մօսունի յարձակման հետ միաժամանակ «Արտաւազդ» խումբն էլ, թւով 40 հոգի, Միհրանի խմբապետութեամբ, յարձակւում է Զօրի զօրանոցի վրայ։ Յարձակումը կատարւում է շատ աջողութեամբ և թիւրք զինուորների մեծ մասը սպանւում է։

Յուլիս 12-ի երեկոյեան ժամը 5-ին արշաւախմբերը, ամբողջ օրւայ կռւից յետոյ, յետ մղելով զօրքերի և քրդական յարձակումները՝ նահանջում են դէպի Ընգըլի բարձունքները հանգստանալու և միևնոյն ժամանակ խորհելու յետագայ անելիքների մասին։ Յայտնւում է, որ մերոնք 15 կորուստ են ունեցել։ Ահա այդ հանգստի և խորհրդակցութեան ժամին, յանկարծ և անսպասելի կողմից, տեղում են գնդակներ. տղաներից ընկնում են 5-6 հոգի։ Դա ռուս կօզակների և սահմանապահ զինուորների դաւադրական կրակն է լինում, երեք սպաների ղեկավարութեամբ։

Հայդուկների խորհուրդը որոշում է չդիմադրել, թէև առաջարկողներ էլ են լինում՝ դաւադրական կրակին կրակով պատասխանել։ Անձնատուր լինելու նշաններն անգամ ռուս օֆիցէրները չեն ընդունում։ Շարունակւում է ռուս կօզակների գնդակների տարափը, և խումբը ցրիւ է գալիս զանազան կողմերի վրայ։ Ցզանների մի մասը ձերբակալւում է ռուսների ձեռքով. միւս մասին յաջողւում է խուսափել։ Ռուս զինուորների այդ վարմունքը կատաղութիւն է առաջացրել...

Նկարագրած դէպքից առաջ, յունիսի 16-ին, Բայազէդի շրջանն էր անցել 14 հոգուց բաղկացած հնչակեան մի հետևակ արշաւախումբ։

ԱՐՃԷՇԻ ԿՌԻՒԸ

Սահմանագլուխ, 8 յունիս

Մասուն միակ վայրը չէ, որտեղ յեղափոխական հերոսական հետզհետէ աւելի լայն ծրագիրներ է գրաւում, ուր ոգեորեալ են գործ դնում՝ ազատագրական գաղափարի համար։ Կռիւ Բասենում, կռիւ Վասպուրականի լեռներում, կռիւ Ապարայում, կռիւ Արճէշի շրջակայքում... Ամեն տեղ էլ միևնոյն տեսակի կռիւ — յեղափոխական շնչին փոքրաքանակութիւնը տրճկական ահագին կանոնաւոր զօրքի և բաշիբոզուկ քրդերի լեփէոնների հետ... Մեկը հարիւրի դէմ։

Ի պատիւ հայ փէդայիների պէտք է ասենք, որ հայաւագիտ բացառութիւններ չեն մեր կռիւները, որտեղ մի բուռ փէդայիներ շատ անգամներ պատասխան յաղթանակով են դուրս գալիս ճակատամարտից։ Այդպիսիներից է Արճէշի կռիւը։ Մայիսի 26-ին Մարիսի ոգեորեալներին, դաշնակցութեան «Ա. Ֆ. Կենտրոնական կոմիտէն, ցնծաձայն ընդհանուր ծաղոովի որոշման իր ազնուադրութեան տակ եղած գծերից մէկով երկիր անցկացրեց։ Աշոտ-Երկաթի խմբապետութեամբ, մի ամրատական խումբ։ Խումբը ապահով տեղն անցնելուց յետոյ, ապաստանում է լեռներում (Դաշնակցական խմբերը իրենց սկզբունք են ընդունել չիջևանել հայ գիւղերում՝ նկատելով դէպքում գիւղացուն վնաս չպատճառելու համար)։

Ինն երրորդ օրը, խումբը շարունակ 15 ժամ ճանապարհ գնալուց յետոյ՝ որոշում է հենգիստ առնել Սօսկունայ գիւղի մօտ, Արճէշին մէկ ժամ մնացած՝ Խօջալու կոչուած մեծ ձորակում։

Խմբի պաշարը սպառուած լինելով՝ երկու հոգի ուղարկում են հաց բերելու, բնակիչները չեն վերադառնում։ Խմբապետը նորից ուղարկում է երեք հոգի — Բէլեցի Պօղոսը և Երկու Ապրօներին։ Գնացողները գիւղ չհասնած, հանդիպում են քրդերի և որովհետև պնդէն են լինում, ընկնում են նրանց ձեռքը։ Բանբարոները անմիջապէս գանակներով մորթում են Պօղոսին, որը յեղափոխական հին հայդուկներից էր։ Ապրօին էլ վիրաւորում և բանտարկում են, իսկ միւս Ապրօն աջողում է փախչել ու խմբին պաշար հասցնել։

Հետևեալ օրը, երբ խումբը պատրաստւում է ճանապարհ ելնելու, խմբի պահապան զինուորը իմաց է տալիս, որ քրդերի մի ահագին դունդ պաշարել է այն քարայրը, որտեղ խումբը մի քանի ժամ առաջ իջել էր իր դիրքից՝ ցրտից ու ոտնձգութիւնից պատսպարելու համար։ Խմբապետը անմիջապէս կարգադրում է կռիւ պատրաստել։ Սկսւում է հրացանաձգութիւնը, մերոնք ներսից, իսկ թշնամին դրսից։ Ամբողջ օրը այդ ձևով անցկացնելուց յետոյ, երեկոյեան խմբապետի հրամանով՝ երկու հոգի փորձում են դուրս գալ այրից և մի քիչ շփոթութիւն ձգել թշնամու մէջ, որը և աջողւում է։ Օգտուելով վայրկենական շփոթութիւնից՝ ամբողջ խումբը կազմ ու պատրաստ դուրս է գալիս այրից և բացուելայ սկսւում է մի տաք կռիւ։ Բայց նախ քան այրից դուրս գալը, խմբապետը դիմում է հետևեալ միջոցին.— Որովհետև զանազան պատճառներով խմբից յետ էին մնացել չորս հոգի, երկու հոգի էլ պաշար բերելու ժամանակ սպանուել և բռնուել էին, պակասած անդամների աւելորդ բեռը և նրանց բաժին պայթուցիկ նիւթերը անհնարին է լինում հետը վերցնել, ուստի խմբապետը որոշում է այդ բոլոր իրերը այրի մէջ մի տեղ հաւաքել և դուրս գալուց առաջ ռումբերի երկար պատրոյգը վառել։ Քրդերը խսկոյն գրաւում են այրը։ Այդ բոպէին ռումբերի ահռելի պայթումը քարուքանդ է անում այրը և տեղնուտեղը գետին փռում 20-ի չափ քրդեր։ Մեր ազատները ապաստան գտան մօտ օրինակ երևոյթից, փախուստ են տալիս, միջոց տալով խմբին ապահով պատռել շղթան և անցնել։ Մի քիչ հեռանալով ջղերը դիրք են գրաւում և սկսում գնդակահար անել փախչող թշնամուն։

Մերոնցից սպանւում և յետ են մնում ընդամենը եօթը հոգի, իսկ թշնամուց սպանւում են մօտաւորապէս 55

քիւրդ, որոնցից մի քանիսը ամենայարանի թուռուններից (ցեղապետ-ազնուական)։

Վասպուրականի, Ապաղձոյի, Բանբէնի կոիւներիկ մանրամասնութիւնները տակաւին չենք ստացել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՄՈՒՇ, 7 յունիս

Հայերու անհանգիստ կացութիւնը բուն Սասունի մէջ նոյնը կը մնայ։ Շատեր կան, որ անմատչելի լեռներու, փապարներու, քարայրներու և անտառներու մէջ պահուած են։ Ոմանք անօթութեան զոհ կը լինեն։ Զօրքերը և լրտես քրդերը անդադար հետաքննութիւններ ընելով՝ կը գտնեն փախստականները և կը ջարդեն։ Անոնք որ քիչ մը ռազմամթերք ունին՝ թանկ կը ծախեն իրենց կեանքը, բայց շատերը նաղած, անզէնք, անհաց՝ զոհ կերթան դահիճներու սուրերուն։

Կառավարութեան թելադրութեամբ ահագին թուով զօրքեր են թափուած, որպէս զի սասունցի հայերը այլևս Սասուն չվերադառնան։ Զանոնք Մուշի սանճակի մէջ ցրելու համար՝ յատուկ յանձնաժողով է կազմուած, հողեր գտնելու։ Սակայն երևի սասունցիներու և հիւպատոսներու ազդու բողոքին վրայ, այս օրերը սուլթանի մի իրադէն հաղորդուեցաւ սասունցիներուն, թէ ազատ են կրկին դառնալու իրենց հայրենիքը։ Հակառակ ատոր, թիւրք կառավարութիւնը, մանաւանդ արդի վալին՝ Ֆէրիգը, ամէն կերպ դաւեր կը նիւթեն այդ իրադէն չգործադրելու և խեղաթիւրելու համար։ Սասունցի հայերու վրայ ճնշումներ ի գործ կը դրուին, որպէս զի անոնք հրաժարին Սասուն դառնալու գաղափարէն։ Ամէն օր խումբ-խումբ զանոնք կը հաւաքեն և կը տանեն կառավարութեան դուռը և կըստիպեն որ յայտարարեն թէ՝ „ո՞ւր որ կառավարութիւնը տեղ որոշէ, հոն է մեր վաթանը“։ — „Թագաւորը Սասուն չի տայ ձեզ“, կ'ըսեն և այս կերպով կ'ուզեն նախապաշարել անոնց միտքը։ Ուրախալի է ըսել, որ ժողովուրդը մինչև վերջ կը պնդէ թէ չի ուզեր ձեռ քաշել իր հայրենիքէն, հոն երթալ կ'ուզեն, այն լեռները, որ շարունակ իրենց արիւնով ներկուած է։ Ժողովրդական այդ յամառութիւնը տեսնելով՝ մի քանիները բանտարկեցին՝ միւսները վախցնելու համար և կըսպառնան ցրուել շատերը աշխարհներու մէջ։ Բայց և այնպէս սասունցիք բողոքեցին հիւպատոսներուն և կը պնդեն իրենց որոշման վրայ։

—

ԿԱՄԱԽ, 18 մարտ

Պոնտոսի լաղերը, որոնք կառավարութենէն արդիւնեալ ծխախոտ կը ծախեն, բռնութեամբ կը մտնեն Կամախու գիւղերը և սպառնալով՝ իրենց բեռցուցած ծխախոտները կը ձգեն խեղճ գիւղացիներուն վրայ ու կը պահանջեն դրամները։

Այս-օրին-կ դեկտեմբեր դառնալու Կամախի վարի Բագառիճ գիւղին մէջ — Խումբ մը լաղեր կը մտնեն յիշեալ գիւղը և ծխախոտները բռնութեամբ գիւղացիներուն վրայ ձգելով, կը պահանջեն դրամները։ Թշուառ գիւղացիք կ'աղաչեն ու կը պաղատին, բայց գազան լաղերը երբեք չեն լսեր, կը պոռան ու կ'ըսեն. „ունիք չունիք պէտք է ունեցածնիդ ծախէք ու մեր ստակը վճարէք որ երթանք“։ Գիւղացիք ալ կը պատասխանեն թէ, Դերկու օր չանցած կուգաք մենք Ն՞ուրկէ պիտի որ վճարենք, առածներս արդէն չէ՛ փէն աւելի եղաւ և մեր կարողութենէն վեր“։ Ասոր վրայ լաղերը տունները կը մտնեն, կ'ուզեն կահ-կարասիքը յափշտակեն և երբ կիները կը դիմադրեն՝ կըսկսին կիներուն զարնել։ Երէցեան Մանուկ աղայի կինը՝ որ 70 տարեկան հասակին մէջ է, անգթաբար կը ծեծեն, մահամերձ վիճակի մէջ կը թողնեն ու կ'ելնեն կերթան։

Նոյն իրիկուն գիւղացիք խորհուրդ կ'ընեն. „Մեր համբերութեան ալ չափ ու սահման չմնաց. պէտք է որ մենք դիմադրելու քաջութիւն ձեռք առնունք, զարնենք և զարնուինք“։ Առաւօտը կը լսենայ. ամբողջ ժողովուրդը եկեղեցի կերթայ. գազան լաղերը կը մտնեն եկեղեցին և Տէր Ստեփանը մէկ-երկու գիւղի իշխաններով բռնութեամբ դուրս հանելով՝ կըստիպեն առնել իրենց ծխախոտները։ Նոյն բոպէին եկեղեցու արարողութիւնը կը խանգարուի, ամբողջ ժողովուրդը՝ երիտասարդ, ծեր, հարս և աղջիկ՝ միահամուռ ոտքի կը կանգնին և կըսկսին եկեղեցու զանգակները հնչեցնել. կրպսպառնան լաղերուն և կը պոռան. „կամ պէտք է որ հեռանաք այս գիւղէն և կամ պիտի վառենք ձեզ կազով. ալ բաւ եղաւ մեր քաշած չարչարանքները ձեր ձեռքէն“։ Լաղերը կը փորձեն զէնք բարձրացնել ժողովրդեան վրայ, բայց չեն կարողանար և կը խնդրեն որ իրենց ազատ ճանապարհ ձգեն և երդում ընեն որ չպիտի վնասեն. բայց ապահովութեան համար, կ'ըսեն, պէտք է որ տէրտէրը և քէհիան մեզ հետ գան գիւղէն մինչև մէկ քառորդ ժամ հեռու։ Տէրտէրը գիւղին Ծատէն յետ կը դառնայ. իսկ քէհիային, երբ գիւղէն արդէն հեռացած կ'ըլլան, ձեռքերը կը կաշկանդեն, իբրև մի ոճրագործի, և մինչև երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող վանքի մեծ խաչք ըսուած տեղը կը տանեն. հոն վրայէն ժամացոյցը առնելով քարի մը տակ կը ջարդեն ու իրեն ալ պատուական ծեծ մը քաշելով՝ յետ կը ճամբեն։

—

ԳԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 27 մարտ

Մի քանի ժամանակ առաջ լուր տարածուեց, թէ զօրքը քաղցից ու ամսականներ ջառնելուց կատաղած՝ յարձակուելու է Վանի վրայ կողոպտելու և սրի անցնելու ժողովուրդը։ Իրօք, փաստը այն է, որ սարայէն եկած մի գունդ զօրք մի քանի ամսականներ չստանալու և անիւղ բրինձով կերակրուելուց զայրացած՝ մի գնդապետի գրգռմամբ հաւաքուել է զօրքի Հրամանատարի դռան, սպառնացել է կոտրել դուռը և ներս խուժել, բայց կուսակալը ժամանակին վրայ է հասել և ազատել է իր թշնամուն (Հրամանատար Ֆէրիգը և կուսակալը թշնամի են միմեանց), բաւականութիւն տալով զօրագնդի պահանջներին։ Բայց մինչև փաշայի գալը՝ կատաղած զինուորները կոտրել են քաղաքի ճանապարհը և երթևեկողներին կողոպտելուց յետոյ անխնայ ջարդել են։ Ծեծ են կերել և կուսակալի որդին, Ադամ բէկը, զինուորական բժիշկը և մի քանի բարձրաստիճան թիւրքեր։ Դէպքի միւս օրը քաղաքի բոլոր շուկաները փակուած էին։

Այս օրերս Վան քաղաքում անանուն նամակների մի հեղեղ փրթաւ որոնցմով սրանից-նրանից, փոքր ու մեծ գումարներ էին պահանջում, սպառնալով հակառակ պարագային՝ սպանել։ Հաստատ աղբիւրից իմացանք, որ Խիւսնի փաշայի հեռաւոր խորհրդով

և կօմիսէր Հիւնների ու Ատամի անմիջական ղեկավարութեամբ սնբբուած մի խաղ է, ապացուցելու՝ որ յեղափոխականներով լի է քաղաքը։ Դրանք են, որ յիմարացրեցին մի քանի հայերին հաւատացնում են, թէ շուտով „հայերը դէպքի պիտի հանեն“; իսկ այդ հայերը „հաստատ աղբիւրից“ տարածում են լուրը և տաճիկ ժողովուրդն էլ կարծելով որ ստոյգ է, հապճեպ պատրաստվում է „ճոյս անգամ չինայեր ոչ մի երեխայի և կին մարդու“;

Վ. Ա. Ն. 25 մարտ

Էրզրումի ռուսական հիւպատոսը՝ հրաւիրելով հայոց առաջնորդին, նախազգուշացրել է ասելով „թող հայերը զգուշանան աղմուկ ու շաքժում առաջացնելուց. այս անգամ թիւրք կառավարութիւնը անխնայ պիտի ջարդէ, նոյնիսկ կին ու երեխաներ. իսկ դուք յոյս չդնէք կրկին, որ հիւպատոսները կը պատսպարեն կանանց ու երեխաներին. մեզ արգելուած է մեր դռները բանալ նրանց առջև“։ Արդեօք այդ „մեզ“ բոլոր հիւպատոսներին է վերաբերում, թէ միայն իրեն — չգիտենք։ Չը գիտենք նոյնպէս, թէ ի զրումի առաջնորդը ինչ է պատասխանել և ինչ միջոցներ է ձեռք առել։ Բայց նա շտապել է այդ լուրը հաղորդել վանի առաջնորդին և այժմ ամբողջ քաղաքը սարսափի մէջ է։ Մեր առաջնորդը աւելի „եռանդ“ է ցոյց տալիս, և ինչպէս երևում է, ոչ մի միջոց չի խնայում տաճիկ կառավարութեան հետ միասին ոչնչացնելու ըմբոստ տարրերը։ Ստանալով այդ տեղեկութիւնը՝ նա շտապել է կուսակալի մօտ, որը կրկնել է նախկին պահանջը՝ „Ցանձնեցէք կառավարութեան այստեղ գտնուող յեղափոխականներին“։ Մի քանի հայ հարուստներ այդ մտքով յորդոր են կարդում ժողովրդին։

Ի դէպ, յիշատակենք մի լուր, որի ճշտութեանը երաշխաւոր չենք. — Առաջնորդը կուսակալի մօտ եղած բոպէին, հեռագիր է ստացուում, թէ ճապոնիան գերի է վերցրել 10,000 ռուս զինուոր։ Առաջնորդը չկարողանալով զսպել իր հրճուանքը, գլխարկը հանում է և աչքերը երկինք ուղղելով գոչում է՝ „Ես ծերունի հայրապետի անէծքն է“։ Կուսակալը շտապում է յայտնել ռուսաց հիւպատոսին, որը փրփրած ասում է մի քանի հայ հարուստներին. „Հայոց առաջնորդը մոռացաւ անցեալ ջարդեր. ոչինչ, կը վերյիշէ“...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴՄՆԱՑԱԿ)

Ս. Պետերբուրգ, 30 յուլիսի

Հեռագիրը, երևի, ձեզ արդէն հաղորդեց քաղաքական երկու պայմանութիւնները, որոնք ցնցեցին մարդը կովկասը։ Գեներալ Անդրէևվ Գանձակում և գնդապետ Բոգաևսկի Իգդիր, — մէկը՝ փոխանհանգապետ, միւսը՝ գաւառապետ, — կոչուեցին տէոորիատի հարուածից, հրապարակի վրայ, բազմութեան աչքի առջև։

Այս անգամ սարսափողը ժողովրդերդը չէ՝ որ փոքր առ փոքր վարժուում է քաղաքական վրէժխնդրութեան սատիպոդակոն գաղափարին, այլ „ամենազօրի“ կառավարութիւնը, որը ապշած է և չէ կարող հաշտուել իրեն, թէ ինչպէս երբեմնի խոնարհ, հեզ գլուխ ծռող ժողովուրդը այսքան կարճ միջոցում դարձաւ ըմբոստ, յանդուգն և աներկիւղ։

Ես այդ „խելօք“ կառավարիչներին եմ թողնում պարզելու այդ քաղաքական այլակերպութեան հոգեբանական պատճառները, և կը բաւականանամ միայն մի քանի խօսք ասելու այն զոհերի մասին, որոնց արիւնով ներկուեց նոյն հողը, որը տարիներ շարունակ իր մէջ ծծեց շատ անմեղների անմեղ արիւնը։

Գեներալ Անդրէևվ, երեք տարուց ի վեր փոխանհանգապետ Գանձակում՝ վերջերս մանաւանդ յայտնի էր դարձել իր հակահայկական տրամադրութիւններով։ Այդ կարծամիտ ատրճանաձիգը, ինչպէս երևում է, հայկական խնդիրը, կամ աւելի ճիշդն ասած՝ հայկական դիմակները պատճանդան էր ուզում դարձնել բարձրանալու, իշխան Գոլիցինից շքանշաններ և գանձարանից լաւ գումար ստանալու համար։ Գանձակ ոտք դրած օրից նա համարեա երկու ամիսը մի անգամ շինծու և ստոյգ զեկուցագրեր է տալիս կովկասեան կառավարչապետին՝ „հայկական դաւադրութիւնների“ մասին։ Զեկուցագրերը յաջորդում էին մէկը միւսին, բայց դաւադրութիւնը չէր երևում։ Եւ ահա անցեալ 1903 թի սեպտեմբերին, Անդրէևվ՝ որպէս եկած համարեց՝ մի մեծ գործ ստեղծելու։ Հայոց եկեղեցու դոյքը նշաւակելու տխուր օրերն էին։ Ժողովուրդը նգաւոր, վշտահար՝ ոգբում էր ստացած հարուածը։ Գանձակում, ինչպէս և ուրիշ քաղաքներում, հայերը վճռեցին կապել բողոքի խաղաղ ցոյց։ Եւ երբ ցոյցը վերջացած՝ ամբոխը ցրուում էր վրայ հասաւ Անդրէևվ՝ աչքերը կարմրած, փրփրած, կատաղութիւնը դէմքին։ Հասաւ և բերեց կոչակներ, ոմնիկանութիւն։ Եւ ոգևորուած իր ուժով, նա հրամայեց հլու կոչակներին՝ կտրել ամբոխի առաջը, կանգնեցնել նրան և կրակել։ Եւ ինքը, այդ խելագար քաղաքագէտը, առաջին օրինակը տուեց, ատրճանակի հարուածով գետին տապալելով մի հայ երիտասարդ։ Նրա օրինակին հետևեցին բիրտ կոչակները և միմեանց ետևից գետին փռեցին բազմաթիւ դիակներ... Կատարուեց մի հրէշաւոր բռնութիւն և ամբողջ քաղաքը ընկաւ սուգի մէջ։

Թափուած արիւնը, սակայն, նրան չխլատեց, այլ աւելի սիրտ տուեց։ Իր ատելութիւնը դէպի հայերը նա սկսեց արտայայտել աչ և ձախ։ Սկսեց կուեցնել հայերին թիւրքերի հետ, ձեռնարկեց խուզարկութիւնների, շատերին քշել տուեց և կարճ միջոցում երբեմնի խաղաղ, հանգիստ քաղաքը դարձրեց յուզմունքների և իրարանցման կենտրոն։ Անպատիժ պահել նրան կը նշանակէր աւելի սիրտ տալ այդ անխիղճ թշնամուն։ Եւ պատիժը տուեց...

Անդրէևվից աւելի անտանելի էր գաւառապետ Բոգաևսկի՝ Սուրմալուի ցորը, ինչ նշանակ աւելի ցանկ պաշտօնով։ Ցասն տարուց ի վեր, ինչ նա նշանակուած էր Սուրմալուի գաւառապետ, այն ապաքաղաքացուը հանգիստ օր չէր տեսել։ Եւ հասկանալի է։ Նրան նշանակեցին յիշած գաւառում այն պատճառով միայն, որ դեռ Կարս և Զաքաթալա եղած ժամանակ՝ յայտնի էր դարձել իբրև խստասիրտ, անգութ գաշտանեայ, իբրև

ռանման կաշառակեր և իբրև եզակի հայատեաց — երեք յատկութիւն, որոնցով միշտ կարելի է առաջնդիմել միապետական այդ դժբախտ անկիւնում։ Նրա սոսկալի կնոջը էր և՛ ջղ ու ձախ կրակ էր թափում, երբ Երևանի նպահանգապետի պաշտօնը վարում էր գեներալ Գրիբոյեդ, որը շնորհիվ տիկին Բօգուսլավսկուն „ազդեցութեան“։ Ուժգնօրէն հովանաւորում էր գեղեցիկ կնոջ գաւառապետական ամուսնուն։ Գրիբոյեդ հեռացաւ Երևանից, բայց Բօգուսլավսկին շարունակեց մնալ իր պաշտօնակից, որովհետև Գրիբոյեդի նոր, աւելի բարձր պաշտօնը կատարեալ էր ջրմար էր էլ աւելի ուժգնօրէն հովանաւորելու այդ ոճրագործին։ Մանաւանդ որ իշխան Գոլիցինին ճնշող Բօգուսլավսկու նման տուն պացնողներ էին հարկաւոր, հաւատարիմ, ինչպէս կէր, կ՚ամբարտաւան, ինչպէս ցինոշիկ։

Հայերին հալածելու գաղափարը, նա հնարում էր դժոխային չնչած միջոցներ։ Հազարից մէկը։ Մի օրը նամրողջ Իգդիրը քանից վերկենալով՝ սաքսափով իմացաւ, որ Գրիբոյեդը, անյայտ մարդիկ՝ ա՛դ ել էն ոմղաւիառուս եկեղեցու պատը և քարերը թափելու կատարած էր անօրինակ սրբապղծութիւն։ Գիտէք, թէ ինչ է նշանակում Կովկասում դիպչել ռուսաց եկեղեցու պատին — դա հայհոյանք է և՛ Աստծուն և՛ ցարին։ Բօգուսլավսկին նոյնպէս զեկուցագրեց Երևան, թէ ռուսաց եկեղեցու պատը քանդողները հայերն են, որոնք չեն դիզում որ Իգդիր ուղղափառ եկեղեցի շինի։ Եւ իբրև հետևանք այդ զեկուցագրի ծկուեցին ձերբակալութիւններ, խուզարկութիւն, աքսոր։ Յետոյ... յետոյ, երբ անցել էր չորս-հինգ տարի, բոլորովին անպատեհ կերպով բացուեց, որ այդ ամբողջ պատմութիւնը սարքել էր ինքը գաւառապետը իր գործակալների միջոցով հայեր աքսորելու և զեկուցագրեր պատրաստելու նպատակով։

Այդ բոլորը բացուեց, բայց Բօգուսլավսկին էլի մնաց դամատապետ, որպէս զի շարունակէ քանդել, հալածել տանջել։ Յոբսահատ ժողովուրդը մի քանի անգամ գանգատուեց Իշխան Գոլիցինին։ Եւ մի անգամ, երբ ինքը Գոլիցին անձամբ եկել էր Սուրմալու, տեղնուտեղը տեսնելով „իրեն Յանձնուած երկիրը“, գիւղական բնակիչների մի պատգամաւորութիւն ներկայացաւ Իշխանին և աղերսագին խնդրեց ազատել գաւառը իր աստմեան մեծից։ Միա՞թ մարդիկ։ — Նրանք վճռել էին այնքան վատ դաւոր մի պատգամաւորութիւն կազմել՝ յոյս դնելով կովկասեան գլխաւոր կառավարչի արդարութեան վրայ։ Ինչ ո՞վ է տեսել, որ միապետութեան մէջ՝ մի փոքր ա՛ւորի դէմ բողոքող անպարկեշտ մնայ։ Չէ ոչ, դէպ յեղափոխութեան նախանշանն էր։ Եւ Իշխան Գոլիցինի դատաղութեան մէջ խելքը կորցրած, յարձակուեց պատգամաւորներից մէկի վրայ, մի պնդակառելի ծերունի, բռնեց նրա միրուքից, թափահարեց և գոռաց „ինչ էլի մի անգամ համարձակուիք գանգատ տալ բարորդ Սիրին կը քշեմ“։

Ասաց և դարձաւ Թիֆլիս։ Իսկ ժողովուրդը մնաց յուսահատ, անօգնական, ձեռքերը ծալած... Եւ ահա յուլիսի 25-ին, մի աներևոյթ ձեռք սնանձնեց հանուր ցաստան Նրտայնտիչի դերը և ժողովրդական վրէժի հանգոյցը լուծեց հրացանի մի գնդակով։

Ո՞ւրիշ ելք չկար։

Ինչի՞ն է արդեօք այս։ Ցանրաբանտաբար ոչ, ինչպէս ցոյց են տալիս լուրերն ու փաստերը։ Իգդիրի դէպքից մի քանի օր յետոյ, մի ուրիշ խուլ անկիւնում, հին-նախիջևան քաղաքում, որ այնքան մեկուսացած է քաղաքական հոսանքներից, դաղթեալ հայերևուհի մի ձեռք, քաղաքապետ այդու մէջ հագին բռնմութեան առջև, ատրճանակի մի հարուածով սպանեց կառավարչական մի գրագրի՝ մի մանուկ իր մանուկներով և այլ շատ բաներով։ Գնդին տապալելով իր զոհը, սպանողը՝ առաջ անցաւ խրոխտ և ատրճանակի հարուածներով ճեղքեց պարոնի ու պնդատացաւոր։

Անպատացած մի քաղաքում դրանք՝ յեղափոխական գաղտնի կոմիտէների այդ նոնվեհեր գործակալները երևան կը գան՝ այլ տեղեր, ուրիշ քաղաքներում՝ շարունակելու արիւնոտ վրէժի գործը, որի համար նրանք ցոյց են տալիս այդքա՞ն անվեհերութիւն։ Ի՞ թէ, տարաբախտաբար, անպակաս կը լինի, որովհետև Պէվէի բէժիմը՝ աջակցութեամբ Գոլիցինի՝ լցրել է կովկասեան երկիրը պոլիկ Պէվէներով և Գոլիցիններով՝ որոնք դժբախտ ազգաբնակութեան կեանքը դարձրել են թոն ու արտասուք, ախ ու շիվան...

Զարգացած տեսորիստական ոգու այդ անպատում բունկումից, Իշխան Գոլիցին, որ արդէն սարսափի մէջ էր հոկտեմբերի 14-ի փորձից՝ իմաստ, կծիկը կապեց, փախաւ Պետերբուրգ, խնդրելու իր զուսուցչի՝ ամենազօր Պէվէի հովանին, բայց հովանու տեղ՝ գտաւ նրա դիակի փշրանքները, թափուած փողոցի կեղտոտ փոշու մէջ...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԹԵՐԹՕՆ

ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՑԸ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

ՅՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏ

(Պաշտօնական արձանագրութիւն)

(Շարունակութիւն և վերջ)

1894-իւն 96-ի պատմութիւնն է, որի վերնկսում է։ Միհենոն վայրերն են՝ Սասուն, Մուշ, Միհենոն, Դիբեղեն են՝ Կէլիեկուզան, Տալորիկ, Սէմալ և ուրիշներ, որ ես կը յիշեմ այս բոպէիս։ Միհենոն մարդիկն են՝ Զէքի փաշա, Ֆերիդ բէյ, զոհերն են միայն ռուրիշ, որովհետև մի քանիսը չասխատ են տունեցել, այդ պնախ, Նահատակեալ առաջին հարուածի տակ և չենթարկուել կենդանի մնացածների հետ Մեծ-Մարդասպանի հրահանգած ոճիրներին։

Միթէ՞ այսօր 1894-ի անցքերի յիշողութիւնների դիմաց՝ մենք չըպէտք է անմիջական դաս առնենք այդ անցեալից։

Թոյլ տուէք հատուածակի յիշել ձեզ այդ ժամանակի անցքերը։ Այն միջոցում ես պետական պանձարանը հանդով գանձում էր յետնեալ կոչուած մի տուրք հայերից, դանձարանը՝ — դ՚ հ՚ ակը՝ ոչ ժամանակից իվեր չըվճարելով հաւաք։ Ձեռք էին ձգել հայերի բոլոր եկամուտները, նրանց ոչխարները, նրանց բոլորը՝ հարստութիւնք։ Այդ վայ հասան քրդերը, որոնք իրենց կողմից պահանջեցին այն վերջական աւանդական մեծաբանքները, որ նրանք փոխորութիւն ունէին պահանջել հայերից։

Այս վերջինները միամտաբար դիմեցին Թիւրք իշխանութիւններին՝ օգնութիւն ու հովանաւորութիւն ստանալու համար։ Գնացին Բիթլիսի վալիի, Թաքսին փաշայի մօտ և խնդրեցին զօրք ղրկել Բիթլիզի վալին ղրկեց նրանց Դիարբէքիրի վալիի՝ Ռուստափա փաշայի մօտ, և այս վերջինը միջամտեց՝ քրդերից իրօք որսը խլելու համար, սակայն իրեն պահելու նպատակով, այնպէս որ՝ թէ հայերը զրկուեցին իրենց վերջին սանտիմներից և թէ քիւրդերը մնացին կատաղած նրանց դէմ։

Եւ 1894-ի Գարնանը՝ անցքերը գահավիժեցին։ Զէքի փաշան, որ արդէն չորրորդ զօրաբանակի հրամանատարն էր, շարժում է իր ուժերը և սկսում է մի ընդհանուր որսախուճապ։ Նա առաջ է նետում վոհմակների պէս, իր զօրքերը—կանոնաւոր բանակ, քրդեր ու Համիդիէներ—Պասնոյ և Ռուշի լեռնականների վրայ։ Կամաց-կամաց ամբողջ ազգաբնակութիւնը ստիպուած եղաւ կենտրոնանալ երկու-երեք կէտերում։ Եւ միևնոյն ցաւը-րիկում ու Կէլիէկոզլանում, ուր կատարուեց այս մայիսի 5-ի դրամայն, միևնոյն վայրերում, 1894-ին, այդ մարդասպան-զինապետի ձեռքերի առջև ու նրա հրամանով, տեղի ունեցաւ մի անմոռանալի ողբերգութիւն։ Ֆրանսիայում և Եւրոպայում չեն մոռացել այն սոսկալի տեսարանը։ Զէքի փաշան, տեղեկանալով, որ հարիւրաւոր զինուած հայեր ապաստանել են լեռներում, խոստացաւ նրանց ապահովել։ Բայց երբ այդ հայերը միամտութեամբ նրա խօսքին հաւատալով, ցած իջան զինաթափ, փաշան փորել տուեց մի փոս Կէլիէկուզանի առաջ, ուր խառնիխուռը թափել տուեց հարիւրաւոր հայեր, մեռած, վիրաւոր, կենդանի։ Բոլոր նրանք, որոնք ունեցել են իրենց աչքերի առջև այդ ահռելի ողբերգութեան պատկերը, բնաւ չեն մոռացել այն։ Այդ պատկերը կը հալածէ նրանց մինչև իրենց վերջին օրը, և նրանք դժուարութեամբ կըմբռնեն, որ դիւանագիտութիւնը թոյլ է տուել Զէքի փաշային՝ վերստանձնել իր հրամանատարութիւնը և իր արիւնոտ գործը։ (Ծափահարութիւններ)։

Եւրոպան ուշ, կամաց-կամաց, ի վերջոյ իմացաւ ճշմարտութիւնը։ Այդ դէպքերը տեղի էին ունեցել 1894-ի օգոստոսին և միայն 1894-ի Նոյեմբերին էր, որ հանրային կարծիքը սկսեց առաջին անգամ զբաղուել նրանով։

Ի՞նչ արաւ Դուռը այդ վայրկեանին։ Նախ և առաջ ամէն բան հերքեց, ապա յայտարարեց, որ ինքը կանգնած է եղել յեղափոխական խմբերի դիմաց, որ իր արածը թեթև բան է եղել և որ հայերը իրենք են կոտորել զիրենք։ Այդ նոյն պատճառաբանութիւնը տեսնում ենք և այժմ, վերջապէս, երբ պետութիւնները՝ Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը յամառեցին, երբ նրանք պահանջեցին նշանակել մի յանձնաժողով, մի պատգամաւորութիւն, որին յանձնարարուէր՝ քննութիւն կատարել տեղնուտեղը՝ գիտէք թէ ինչ ձևակերպել համարձակուեց Դուռը։ Նա յանդգնութիւն ունեցաւ ներկայացնել պատճառներ, որ նա կարծում էր ունենալ,—պատճառներ՝ ձեռնարկելու համար [illegible] ապստամբութեան ճնշումն։ Յեղափոխական խմբերի կազմակերպում, հարկերի մերժում, վառօդի ու արձիձի բաժանում, ֆէդայիների գումարումներ լեռան վրայ, այսինքն հայերի՝ որոնք յանդգնութիւն ունէին դիմադրել, հայ գիւղերի հրդեհումներ նոյն հայերի ձեռքով, այդ չարաձձիների որոշումը՝ ջնջելու թիւրք զինուորներին, վերջապէս նրանց անպատրաստակամ յարձակումները կայսերական զօրքերի վրայ։

Սկսեցին քննութիւն։ Ուզեցին լրջօրէն քննել այն պատճառաբանութիւնները, որ Դուռը առաջ էր բերում՝ ծածկելու համար կատարուած ոճիրները։ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի հիւպատոսները, որոնք միաժամանակ սկսել էին այդ քննութիւնը, յայտարարեցին պաշտօնապէս, որ իրօք յեղափոխական պրոպագանդ չէր մղուել։ Որ հարկը կանոնաւորապէս հաւաքուում էր և որ ինչ վերաբերում է ռազմամթերքին՝ հայերը ստիպուած են եղել հայթայթել նրանց՝ ինքնապաշտպանութեան բնական մղումով։ Այդպէս յաղթականօրէն պատասխանուեց Դրան առաջ բերած բոլոր կէտերին և ոչ միայն հրապարակախօսները, այլ նոյնիսկ արտասահմանի մեր դիւանագիտական կամ հիւպատոսական ներկայացուցիչները այնպիսի ուժգին ցասում զգացին, որ՝ ֆրանսիական խիղճը սփոփելու համար՝ գրեցին որոշ խօսքեր, որ ես թոյլատրութիւն եմ խնդրում կարդալ,—ներեցէք մեզ՝ եմ նոյնքան ճշմարիտ այսօր, որքան և սրանից 10 տարի առաջ։

Նախ մի ֆրանսիական հիւպատոս էր, պ. Թերժրոն, որ գրեց հետևեալը.

„Ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է կառավարութեան ու իր պաշտօնեաների վրայ“։

Դրանից յետոյ, ֆրանսիական դեսպանի տեղապահն էր պ. Լա Բուլինիէր, որ գրում էր այն ժամանակուայ մինիստր Հանոտոյին.

„Թիւրք կառավարութեան չկամութիւնը և վարանումը հասցրել են խնդիրը այնպիսի մի կէտի, որ միայն ամենակորովի և ամենակտրուկ միջոցները կարող են շանս ունենալ՝ կասեցնելու ջարժումը... Ստիպողաբար անհրաժեշտ է՝ փոխել Բաղէշի իշխանութիւնները, նաև մոցնել ռէֆորմները, որոնց նախաձեռնութիւնը պիտի ընդունէ սուլթանը անյապաղ“։

Տաս տարուց աւելի է, ինչ այդ իրողութիւնները տեղի են ունեցել, և այդ խօսքերը արտասանուել են, և եթէ վհատեցուցիչ, գրգռող, յուսահատեցնող մի հանգամանք կայ Արևելեան այդ խնդրի մէջ,—դա հէնց այդ յաւիտենական վերսկսումն է, այդ ոտնահարումը միևնոյն տեղում, որին մենք միշտ դատապարտուած ենք։

Բաւական չէ, որ Եւրոպան ընդունում է—որպէս նոր բարենորոգումներ—այն խոստումները, որոնք քսան անգամ արուել են նրան, այն միջոցները, որոնց կիրառումը հարիւր անգամ ծանուցուել է արդէն. բաւական չէ այդ. Եւրոպան ցոյց է տալիս, իբր թէ լուրջ ընդունում է այն ողորմելի և ստայօդ կրկնութիւնները, որոնցով Դուռը փորձում է ծածկել իր նոր ու ամենագարշելի ոճիրները։ (Ծափահարութիւններ)։

Ես հարցնում եմ ինձ, արդեօք այսօր իտես մի եղեռնափորձի, որը ցոյց գիտցէք, սկզբնաւորութիւն է միայն, պիտի նորի՞ց կաշկանդուենք այն մեթոդով, որը այնքան վատ ծառայութիւն մատուցեց մեզ 1895-ին և 96-ին։

Գիտեմ, անշուշտ, որ ներկայումս մենք ունենք կառավարչական արարքի վրայ արտաքին գործերի մի մինիստր, որը շատ ընդարձակ չափով բաժանում է մեր զգացումները։ Ես գիտեմ, որ ամէն անգամ, երբ կարողացել է՝ նա տուել է շատ իրական բարեացակամութեան ապացոյցներ հայ ազգաբնակութեան վերաբերմամբ։ Գիտեմ, որ երբ մենք շտապեցրինք նրան նշանակել նոր հիւպատոսներ, որոնք կարողանային գնալ, այսպէս ասած, հան-

գըստացնել իրենց ներկայութեամբը ազգաբնակութիւնը Սասունի և Մուշի բոլոր կէտերումը։ Դա այդ արեց փութկոտութեամբ։

Սակայն որքան էլ մեծ լինի բարի կամքը, այդ միջոցները անտարբերութիւնից էլ աւելի վտանգաւոր են, երբ մնում են կիսամիջոցներ։ Հիւպատոսներս նշանակել Ձրա հաւար միայն, որ սրանք մնան լոկ անզօր ու անգործ վկաներ, — դա աւելի վատ է, քան եթէ Ֆրանսիան բնաւ չունենար ներկայացուցիչներ այն վայրերումը։ (Ծափահարութիւններ այլ եւ այլ նստարանների վրայ)։

Բողոքներ դուք արել էք և արել էք կորովի կերպով։ Ասենք, Ֆրանսիան էլ մենակ չէ եղել. նա իր հետ ունեցել է Ռուսաստանը, Անգլիան և ուրիշ պետութիւններ։ Բայց՝ սուլթանը գիտէ, թէ ինչ արժեն այդ բողոքները, երբ նրանց ետևից չկա՝ հաստատ որոշում՝ հասնելու նպատակին և յետ չնահանջելու գործողութիւնների առաջ, եթէ սրանք անհրաժեշտ դառնան։

Այս վայրկեանիս յայտնւում է, որ ֆրանսիական դրօշը պատեցրել են Արկելքի ու Փոքր-Ասիայի եզերքները. ֆրանսիական նաւատորմը հէնց այս րոպէիս, կարծեմ, գտնւում՝ է Կ. Պոլսում, և թոյլ տուէք ինձ ասել, ես չեմ դիտցում իբրև նպաստաւոր մի հանգամանք, որ ուղղակի հէնց այս րոպէիս է նա ընդունում սուլթանի հիւրասիրութիւնը։ Բայց թոյլ տուէք ինձ հարցնել ձեզ, արդեօք այսուհետև հաստատուած է, իբրև ֆրանսիական հանրապետութեան անբռնաբարելի մի օրէնք, որ Ֆրանսիայի նաւային ուժերը կարելի է գործածել՝ այս կամ այն մասնաւոր անձանց դիւանական պարտքերը ստանալու համար. . . (Շատ լաւ, շատ լաւ, ծայր. ծափակ. եւ աջակ. նստարանների վրայ)։

Կան աւելի սրբազան պարտաւորութիւններ, քան դրանք։ Դա բարոյական քաղաքական, միջազգային, իրաւական յանձնառութիւններն են, որ ունի ամբողջ Եւրոպան սուլթանի դիմաց։ Մի՛ սխալուէք, պարոն Մինիստր. եթէ դուք այժմ սխալուէք ընդունել սուլթանի պատրուակներն ու ձախորդութիւնները, կամ՝ աւելի որոշ ասենք՝ սուլթանի ստերը, մենք մեր խղճի վրայ չենք ունենայ միմիայն Սասունի մէջ ընկած—չգիտեմ, պէտք էլ չունիմ գիտնալու—3,500 թէ 5,000 հայ դիակները։ Յիշեցէք, որ 1894-ի Սասունի ջարդերով արիւնոտ վարագոյրն էր միայն, որ բարձրացաւ, որովհետև ժամանակին դարման չեղաւ չարիքին, որովհետև չպահանջեցին Զէքի փաշայի ու Ֆէրիդ պէյի անմիջական պաշտօնանկութիւնը, որովհետև չպահանջեցին Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի լիակատար կիրառումը։

Ոչ միայն 1904-ին Սասունում սպանուած 6 հազար հայերի պատասխանատուութիւնն էր, որ Եւրոպան առնում էր իր վրայ, այլև սուլթանի հրամանով գետին փռուած 300 հազար դիակներինը,—գրեթէ մի ամբողջ ազգի սպանութեան պատասխանատուութիւնը։ (Ծափահարութիւններ ծայր. ձախակողմ եւ աջակողմ)։

Եթէ դուք չէք ուզում թոյլ տալ վերսկսելու մի մեծ ոճիր, որը ոչ միայն մի եղեռնափորձ է ընդդէմ մարդկայնութեան, այլև գերագոյն մի վտանգ Արևելքի և աշխարհի խաղաղութեան համար, ապա առաջարկում եմ ձեզ — քանի որ ունիք ազդու գործակցութիւնը Բերլինի դաշնագիրն ստորագրող առնւազը երկու մեծ պետութիւնների, Անգլիայի ու Ռուսաստանի, — առաջարկում եմ ձեզ՝ բարեհաճել անհրաժեշտ դիմումներն անել Կ. Պոլսում։ Առաջարկում եմ, իհարկին, պաշտպանել այդ դիմումները նոյնպիսի մի ցոյցով, որով դուք գոհացում ստացաք չորս տարի սրանից առաջ (շատ լաւ, շատ լաւ)։ Առաջարկում եմ ապահովել ձեզ մի այնպիսի ապագայից, որ դուք այժմ դեռ ևս կարող էք հեռացնել, բայց որ վաղը կարող է խոյս տալ ձեզնից, ինչպէս և մեզնից։ (Բուռն ծափահարութիւններ ծայր. ձախակողմ եւ աջակողմ)։

ՆԱԽԱԳԱՀ.—Խօսքը արտաքին գործերի պ. մինիստրին է.

Պ. ԴԵԼԿԱՍԷ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ.—Նախ քան խօսելը այն իրողութիւնների մասին, որոնք պատճառ են եղել մեր յարգելի պաշտօնակցի հարցումին, ես հարկաւոր եմ սեպում, նրանից յետոյ, յիշեցնել Պատգամաւորական Ժողովին, որ Հանրապետութեան կառավարութիւնը, նախանձախնդիր այն ստորագրութեան, որ նա դրել է 1878-ին Բերլինի դաշնագրի տակ՝ մի քանի անգամ վերջին տարիների ընթացքում տուել է իր աջակցութիւնը՝ երաշխաւորելու համար գործադրութիւնը այդ դաշնագրի կարգադրութիւնների, — թէ նրանց, որոնք ամփոփուած են 23 յօդուածի մէջ և վերաբերում են Մակեդոնիային և թէ նրանց, որոնք յայտնուած են 61 յօդուածում և վերաբերում են Փոքր-Ասիայի այն շրջաններին, որոնք առանձնապէս բնակուած են հայերով։

Ինչ վերաբերում է Հայաստանին, թէպէտ և մեր առևտրական շահերը բնաւ չեն պահանջում—խնդրում եմ հաւատալ — ես աւելացրել եմ մեր գործակալների թիւը այդ երկիրը կազմող գաւառներում, միմիայն և միմիայն ցոյց տալու համար Ֆրանսիայի հոգատարութիւնը։ 1903-ի սեպտ. 14-ին ես սահմանել եմ փոխհիւպատոսութիւն Վանում և այս տարուայ յունւարի 23-ին հաստատել եմ մի ուրիշ հիւպատոսութիւն Խարբերդում։ Նոյնը արել են Ռուսաստանը և Անգլիան։ Այդ հիւպատոսների ներկայութիւնը մի ճշմարիտ սփոփանք է եղել ազգաբնակութեան համար, և շատ անգամ մեր գործակալների միջոցով մեզ յայտնուած երկիւղը փարատուել է մի փութկոտ ու կորովի միջամտութեամբ Կ. Պոլսում։

Մինչև իսկ, երկու տարի սրանից առաջ — յարգելի պ. Պրէսանսէն գիտէ այդ—ես կազմակերպել էի մի յատուկ միսսիա, որը պտտել էր այն շրջանները, որոնք մեզ ցոյց էին դրուած, իբրև քրդերի սպառնալիքի տակ գտնւող. — քրդերի՝ որոնք, ըստ ոմանց, գործիք են թիւրքաց իշխանութիւնների ձեռքում, ըստ ուրիշների՝ նրանց սարսափն են և որոնք թերևս միաժամանակ կամ փոխնիփոխ թէ այս են և թէ այն։

Յամենայն դէպս այդ միսսիան ունեցել է լաւ հետևանքներ, և ազգաբնակութիւնը վկայել է մեզ իր երախտագիտութիւնը, — յարգելի պ. Պրէսանսէն, իհարկէ, չի կարող չիմանալ այդ։

Այժմ գալիս եմ Սասունի անցքերին։ Ինչպէս պ. Պրէսանսէն պնաց, Սասունը դժուարամատչելի մի լեռնավայր է, ուր սփռուած են քառասունի չափ գիւղեր, որոնց ազգաբնակութեան խոշոր մեծամասնութիւնը հայ է։

Այնտեղ էին ապաստանել հայ յեղափոխականների կամ ֆէդայիների բազմաթիւ խմբեր՝ քրդերի զօրքերի հետապնդեցած բազմաթիւ ընդհարումներից յետոյ, Մուշում, Բիթլիզում և Վանի շրջակայքում։ Այդ ֆէդայիները հայերի համար մի քիչ նոյնն են, ինչ որ անցեալ տարի բուլգար յեղափոխականներն էին Մակեդոնիայի գիւղացիների համար. — եղբայրներ, անտարակոյս, բայց ծանրաբազուկ, հրամայական ժեստով, որոնք

օրէնքներ են թելադրուած։ Ճրագալոյսում են մարդիկներ համախմբելու հաւաքում են պաշար ուղղարան մ՝ չեն հանդուրժում դիմադրութեան։ Այնպէս որ խաղաղ հայերը միաժամանակ մոռացում են թիւրքերից, որոնք հաքստահարում են նրանց և փէդայիներից, որոնք ուզում են նրանց ապատեր։

Ապստամբութիւնը ճնշելու համար, տաճիկ զօրքերը ապրիլի վերջերում հրաման ստացան շրջապատել Սասունը, ապա նրանք մաքրելով բարձրացան լեռնալանջերը՝ դիմաւորելու հասած փէդայիներին։ Դուք լսեցիք այդ անցքերի պատմութիւնը, որ ստացել է և որ ձեզ ալեաշ յարգելի պ. Պրէսանսէ։ Չեմ կարծում, թէ մեր պաշտօնակիցը կամենար երաշխաւոր կանգնել այդ պատմութեան բացարձակ ճշդութեանը և չեմ կարծում, թէ նա հնարաւորէր որ նա աւելի թելադրուած էր կրքից, — դիւրին բացատրելի մի կրքից — քան թէ ճշդութեան խղճամիտ մտահոգութիւնից։

(Վերջը յաջորդ անգամ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԻՍԱՔԵԱՆ

(ՇԱՒՐՕ)

Անկեղծաբար կարեցի Ֆրէդ Համբօնայի թղթակցութիւնը ստացած նախ Գէորգեան ճեմարանուհի տրտնջից արձագանգ „քարոզչութեան“ պատճառով, ապա ներսէսեան զբաղմունքներ վերջերս գիւղական դրադրի պաշտօնն էր վարում Ղարսի շրջանի մէջ և հանդիպեց Եր հոգեկան դժուարութեան համար աշխատող շրջաններին։ Սակայն դիրքորոշումը էութեան այդ ձևը նրան բաւարարութիւն չտուեց և նա որոշեց աւելի վճռական դեր խաղալ կուսի երկիրը անցնելիս։ Մտաց թիւրքաց Հայաստան փոխադրուելու նա գործի բայց շատ չանցած՝ հոգ գնաց իր անդգուշութեան։ Նրան ուղեկցող երկու քիւրտերի տարդի դաւադրութեամբ սպանեցին Շաբաթին կողոպտեցին փողը ու շորերը և դիակը նետեցին ջրի մէջ։

Կիսաճամբին ընկաւ երիտասարդը, գնաց չտեսած իրատեսութեամբ սիրած իդեալին։ Նրան էլ այդ իդեալը ինչ զգացմունքներ էին պատճառել նրա միտքն ու սիրտը դա անդիտակ, բայց յուզիչ խօսքերով արտայայտուած է ամէն կտակի մէջ որ նա թողել է իր փոքրիկ զաւակի անունով...

Սիրելի և պաշտելի Յակոբիկս!

Թանկագին հրեղէն

„Վերջին պնդմամ քեզ իմ նրբագոյն կտակն եմ անում։ Դեռ միշտ աչքի առաջ ունեցիր, որ ես քեզ զէյթունցի պապդ, իմ հօր Յակոբի անունն եմ դրել։ Բացի դրանից ես քո հայրը գնացին միւնոյն ճանապարհով, ես դու, իբրև արժանաւոր չլինելով պարտաւոր ես նոյն ճանապարհով գնալ։ Այդ ճանապարհը փշոտ է և դառն, այնտեղ երբէք վարդեր չեն բուսնում։ Քո պապը ես հայրը երբէք վարդերի վրայով չէին անցել, այնպէս որ դու էլ չես անցնիլ։

„Սիրելս նէիրական յիշատակ քեզ ուղարկում եմ, որպէս զի անպատճառ հագնես այս ՎԷՔԷՆԿԷՆ, կապես հօրդ գօտին և այս մահացու սուրն էլ, բաղ կրեպ։ Թող իմ հայրական օրհնութիւնը քեզ վրայ լինի, թող այդ սրբազան գաղտնիքը քո մէջ յորդեցնի վրէժխնդրութեան ազատարար թոյնը և դու կարողանաս քո հօր վրէժը առնել։ Ես գնում եմ մեռնելու։ Կանչում եմ քեզ անպին զաւակս որ դու նոյնպէս գնաս արիւնի և արտասուքի երկիրը, վրէժխնդիր լինես քո հօր, սպանուած մայրերի, բռնաբարուած անմեղ քոյրերի պատուի համար։

„Եթէ ես մեռնիմ և այլևս չկարողանամ քեզ, սիրելի Յակոբիկս, տեսնել, այս նվիրանդ կնքում եմ բաւական է, որ դու ըմբռնես այն գործի սրբութիւնը, ազատութեան այն ջերմ ու սուրբ փափագը, որին դու պիտակիր կերպով պիտի վերաբերուես։ Հօրդ վերջին կամքը կատարես։ Իսկ եթէ դա քո պարտաւորութեան զաւակը պիտի չլինիս ես քո բարոյականութեան ես։ Եսի մասին խոչտիր։ Հէնց այդ մարդ անիծում եմ քեզ։ Թող յաւիտենական անէծքը միայն դրջնմի անարժան որդու։ Ճակատիդ որ չլսեց հօր խրատը։

„Ես գնում եմ մեռնելու, վրէժ առնելու, արտասուք քամելու։ Թող իմ այդ սրբազան պատգամը քո մանկական հոգուն խորը թափանցէ հէնց այժմեանից։ Ես յոյս ունիմ, որ իմ թանկագին զաւակը կը լինի այնպէս ինչպէս որ եղել են իր հայրը ես պապը։

„Ես սիրելի ես պատական ամուսինդ քեզ վրայ նոնկպէս պարտականութիւն եմ դնում քո որդուն դրթել այնպէս, ինչպէս որ ես եմ պատգամել։ Զէ՞ ոչ ես քեզ սիրում եմ։ Եթէ դուք էլ գնաք սիրում ես (ես դրան հաւատում եմ), վերջապէս ասա-տուած դիմաց իմ Յակոբիկին։

„Մնա՛ք բարով թող Աստուած որդի ձեզ ես թող իմ ցանկութիւնները միայն ցանկութիւն չմնան։ Հաւատում եմ լսելու։

Իսկ Մէծոնիկիս կը ցանկայի որ լինէ այնպիսի հերոսուհի, որպիսին էր Անիի դարի պարերի վրայից պատերազմող Մէծոնիկը։

„Մնա՛ք բարով, համբուրում ես քորդի դիմաց։

Քոր Մ. ՄԻՍԱՔԵԱՆ (ԳՈՒՐԳԷՆ ՎԱՆԱՆԳԵՑԻ)

24 յունուար 1904

Թուրիզ

Այդ կտակը նոր ա բ ա ն ն է, ամենամեծ պարծանքը հայրակորոյս ընտանիքի։ Ժողովրդական վրէժխնդրութեան պատգամն է այս, որ սպառնում է սերունդից սերունդ անցնել, բայց միշտ թորրոբուած միշտ կանգնում։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամաւորութիւնը, որի վերաբերեալ մանրամասնները հանդուրժածներն մեր հեռագիրների քաժնում Պարիզում տեղակցութիւն ունեցաւ արտաքին գործերի մինիստր Դելկասէի հետ և ընդունեցաւ հանրապետութեան նախագահ Լուբէյի կողմից։ Պարիզից պատգամաւորութիւնը անցաւ Լօնդոն, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ անգլիական արտաքին գործերի մինիստր Լանսդաուի կողմից, և սպասում է Էդուարդ թագաւորի վերադարձին նրան ներկայանալու համար։ Պատգամաւորները Լօնդոնից պիտի գնան Հռոմ։

*

Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան ուղարկուած է 30 հազար ֆրանք, իր հիւպատոսարանի միջոցով Սասունի արկածեալներին բաժանելու համար։ Նոյն նպատակով մինիստրութիւնը իր ձեռքի տակ ունի դարձեալ 5,000 ֆրանք։ Մեզ հաղորդում են վստահելի աղբիւրից, որ պ. Դելկասէ հաստատել է գումարները հասցնել նպատակին։

*

Մեզ գրում են Կարսից.—

„Յունիսի 22-ին, գիշերուայ ժամը 10½-ին, տէռորի ենթարկուեց կառավարչական յատուկ ճանապարհ Վասիլ Դրոզդով, որ վարում էր Ժանդարմերիայի թարգմանի պաշտօնը։ Տէռորիստը չէ ձերբակալուած։ Մանրամասները յաջորդ նամակով“։

*

Կիևկասի „Հայ ինքնապաշտպանութեան կոմիտէն“ հրատարակել ֆինլանդացի ժողովրդին ուղղած մի շրջաբերական, որից առնում ենք ներում մի քանի քաղուածքներ.

„Ճնշուած հայ ժողովուրդը գոհունակութեան և ցնծութեան խորին զգացմունքով լսեց Ֆինլանդիայի կառավարիչ Բոբրիկովի, ռուսական բռնապետութեան վիժած այդ կատաղի գահճի մահը։

„Ռուսական կառավարութիւնը բիրտ ոգեանարգձևով ոտի տակ տուեց Ֆինլանդական մեծ ժողովրդի, ինչպէս և իր բռնապետական բէժիմի տակ հեծող բոլոր ժողովուրդների քաղաքակրթական բարձր իրաւունքները։

„Հայկական ինքնապաշտպանութեան կոմիտէն“ իր գոյակցութիւնը յայտնելով ֆինլանդական ժողովրդի ազատութեան համար զոհուած Եւգենի Զաուսանի մահուան առթիւ, համակուած է ցնծութեան զգացմունքով բռնապետութեան գագաթնակէտ ծառայի Բոբրիկովի վախճանից։

„Հաւատում ենք, որ այսուհետև ևս Ֆինլանդիան՝ բարձր պահելով ազգային դրօշակը՝ անյողդող ու ամրաբար կը կռուի իր կորցրած ազատութեան համար։ Թող հպարտանար Ֆինլանդիան իր զաւակներով, որոնք անձնուիրաբար և ազնուութեամբ կռուում են հայրենիքի ազատութեան մեծ գաղափարի համար և թող նրա լաւագոյն քաղաքացիներից մէկի հերոսական մահը ոգեւորող օրինակ հանդիսանայ բոլոր ազնիւ մարդկանց համար։

„Բազմաչարչար հայ ժողովուրդը, որի քաղաքացիական ազատութիւնը դիւրացած է ռուս բռնապետութեան կամայականութեամբ, որի ազգային-եկեղեցական սեփականութիւնը յափշտակուած է աւազակօրէն, իսկ հանրօգուտ և կրթական հաստատութիւնները՝ աւերուած, համակրութեան ու համերաշխութեան անկեղծ զգացմունքով ողջոյն է ուղարկում վիճակակից Ֆինլանդացիներին։

„Ձեռք ձեռքի տանք, վիճակակից Ֆինլանդացիներ“։

„Բոլոր տառապող ժողովուրդների միացած ուժով ցոյց տանք ռուսական բռնապետութեան, որ ճշմարտութեան, հաւասարութեան և արդարութեան լոյսը մատապագայում պիտի տարածուի լայնածաւալ Ռուսաստանի վրայ“։

*

Անդրկովկասեան քաղաքներից մէկում, ինչպէս մեզ տեղեկացնում են այնտեղի ընկերները, ոստիկանութիւնը փորձում է կեղծել յեղափոխական կոմիտէների կնիքը, գաղտնիքներ իմանալու և հասարակութիւնը մոլորեցնելու նպատակով։ Փաստը վերստուգած է, և մենք շտապում ենք զգուշացնել թէ՛ դաշնակցական մարմիններին և թէ առհասարակ յեղափոխական բոլոր կազմակերպութիւններին, որոնք կարող են զոհ լինել ոստիկանական այդ նորաձև դաւին։

*

Հոկտեմբերի 3-ին Ամերիկայի Բոստոն քաղաքում պէտք է բացուի Միջազգային Խաղաղութեան XIII կոնգրէսը։ Նախորդ տարիների նման՝ այս տարի ևս մի յատուկ պատգամաւորի միջոցով այդ կարևոր ժողովին պէտք է ներկայացուի հայկական խնդիրը և կուռող հայ ժողովրդի պահանջը։ Սէն-Լուի քաղաքում ևս, ուր համաշխարհային ցուցահանդէսի առիթով տեղի պիտի ունենան կարևոր կոնգրէսներ, պիտի արծարծուի հայոց խնդիրը։

*

Յունիսի 19-ից մեզ գրում են Մուշից.

„Կառավարութիւնը կը շարունակէ հալածել, բռնաբարել ամէն, թէ յեղափոխական շարժումը պիտի վերանորոգուի լեռներուն մէջ։ Առանձին ուշք կը դարձուի յեղափոխական խմբապետներու ոչնչացման գործին վրայ։ Լուր կը պտտի, որ Վահան անհետացած է։ Թիւրք իշխանութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ իսկութիւնը իմանալու։ Անդրանիկի վիճակը հալածական է և աւելի դժուար քան առաջ, որովհետև տեղական իշխանութիւնը յատկապէս անոր ետևէն ընկած է“։

*

Միացեալ-Նահանգների և Թիւրքիայի միջև ծագած միջադէպը, որ օգոստոսի սկիզբներին քաղաքական փոթորկալի խնդրի կերպարանք էր ստացել, վերջացաւ անգրպտանդեան հանրապետութեան կատարեալ յաղթանակով։ Հէնց որ ամերիկական զրահաւորները երևացին Թիւրքաց ջրերում՝ պատրաստ ծովային մի ցոյց անելու Սուլթան Համիդ, այնքա՛ն յանդուգն թոյլերի դիմաց, անմիջապէս խոնարհեցրեց գլուխը և բաւարարութիւն տուեց վճռական թշնամուն։

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ռուսաստան.—ԴՐԱՄ կոմիտէից 14,000 ֆր., Մ. Ք.-ի Բարձր Հայր խմբ. 133,5 ֆր. (50 ռուբլի), Դրամ կոմ-ից 15,700 ֆրանք։

Ռումանիա.—Կալացի Տալորիկ խմբից 27 ֆր., ուրիշներն են՝ Եբլանդ, Արշակ, Երանի, Երիտասարդ 4-սկսեան ֆր., Շնիկ 5, Սրտոտ, Սեւակ 3-ական ֆրանք։

Ամերիկա.—„Լօրէնսի“ կոմիտէից „Դրօշակ“-ին նուէր 1903 տարեան համար 30 դոլար։

Ընդհանուր գումար 30,231 ֆրանք։

ՊՐԻՊԱԿՈՒՄ.—№ 6 „Դրօշակի“ Ռուսմուզ.—Սամսվիտի հանգանակութիւնի պիտի լինի 90 ֆր։ Մաքի ձեռքինը ցանց։ 222 ֆր. Գումար 312 ֆրանք։

Ղ-ի Պէյնոնից Ցակոբ 1 շիլինգ պիտի լինի Սասնի անգլ.։

Լ. Պզտաաբ Մարմին (ոսկի կ. ...)

Զ. 40 ոսկի զաղդիական, Ը. 100 ոսկի զաղ., Ս. Թ. 100 ոսկի զաղ., Ա. 15 ոսկի զաղ., Զ. Բ. 45 ոսկի զաղ., Ս. Ք. 22 ոսկի զաղ. եւ 10 Ֆր., Ց. Ի. 10 ոսկի զաղ., Ս. Թ. 312 ոսկի զաղդիական, Մ. 30 ոսկի զաղդիական, Ն. 22 ոսկի զաղ. եւ 10 Ֆր., Օ. 35 ոսկի զաղ., Ս. Ը. 100 ոսկի զաղ., Թ. Զ. 50 ոսկի զաղ., Զ. Մ. 20 ոսկի զաղ., Պ. 75 ոսկի զաղդիական:

ՎԻԵՆԱՊԷՆ՝

Կացին 7 դահեկան փարա, Ձա խ. 40 դահ., Կաղին 5, Կամք խ. 50, Հրմիք 20, Հիտրայ 20, Հաւակրող 47, Աշոտ Երկաթ 5, Սեպուհ 10, Ջան 10, Մօլի 5, օր. Ս.-էն 162, Կամք 145, Փառատ 5, Վրէժ 20, Կացին 5, Հրատուր 55, Էրէշ 51, օր. Վանդունի 20, Ոմն Երգակ 160, Աղպուհ 80, Ջանա 20, Մրէշ 20, Փառրաղ 10, Վրէժ խմբ. 40, Կայծակ 10, Ուժանակ 20, Ոտիստան 5 դահ. Գումար 844 դահեկան 20 փարա:

ԲԱԿԱՆԵԱՆ կեդր. Կոմիտէն՝

Վանայի Կոմիտէն — Տարօն խմբ. (մարտ-ապրիլ) 23 լվ, Հայրիկ խմբ. (մարտ-ապրիլ) 20, Ռշտունցի խմբ. (ապրիլ-մայիս) 18, ընկերական ինչոյթի մէջ, Գրգոյի „Հայ եմ ես" երգի առթիւ հանգանակուած 103, Հրատ-Գիմարի մեջոցաւ Պոլսոյ Մ. Ե. 60, Ռ. Մեծիկեանէ 10, Ցնարոյի Ամթակոմիտէ 20, Վարդոյի մեջոցաւ Փիլիպ Պարոնէ 160 ոսկի Ֆրանք:

Սլիվէնի ենթակոմիտէն՝ Յունուար-փետր.-Վարդ՝ Ստրաշամ կայմարանի Արարատ խմբ. 54 լվ, նոյնը ընկեր Խաչիկ Թոշաֆեանէ 55, Սլիվէնի Ֆանալոյեանի խմբ. 17. 20, Ստրանջայի Արարատ խ. 13, Քէշանի կայարանի Հիմարանէ 30, Սլիվէնի Վասպուր. խմբ. Վիճակահանութիւնէ 40, Ստրաշամ կայարանի Սերոբ-Աղբիւր խ. 66. 80, Նոր կայարանէն հանգանակ. Դոյնանի ժողովէ 47. 20, Սլիվէնի կանանց „Արաքս" ընկերութ. 70 լվ:

Ցնարոյեան հօր ժողովով՝ Ինչպէս Ցնարոյի ազգ. ... Բ. Մահալէ 114 լվ, Գարապունար 86. 80, Գայանդրգ եւ Հասքեոյ 42, Քէրմէնլի 25. 10, Գարնօպատ 58. 30, Նամպոլ 25. 30 լվ: Գումար 351 լվ 80 սանտիմ:

Ռէտուսթոյի կոմիտէն՝ Ցնարոյեանի Ցնարոյ հանգանակուած Ոսկի Թորոսեանի եւ Վրթանէս Փափազեանի միջոցաւ՝ Յովհ. Մարտիրոսեան 20 լվ, Գր. Գարակէօզ 20, Պետո 10, Մանուկ Խաչ. (մոռս) 20, Խաչո 10, Ապրօ 5, Նիկողոս 5, Կոստանդին 4, Սաթօ 1, Վասակ 5, Փէշլիվան 5, Պետրոս Կարապետ 5, Վարդան Նազար. 2, Թովմ. Մարտիրոս. 2, Մկրտիչ Ճաքէր. 7, Յարութիւն Սարգիս. 1, Խաչիկ Թովմաս. 1, Մկրտիչ Յոհան. 3, Ղազար Պողոս. 2, Յովհան. Ղազար. 2, Արիստ Պետրոս. 2, Զակար Պետրոս. 5, Տիգրան Սարգիս. 5, Յարութիւն Մարգար. 20, Նշան Մանուկ. 1, Տիմոթի (յոյն) 2, Նշան Պողոս. 4, Խաչար Թորոս. 2, Պեղոն Կարապետ. 2, Հանը Ծէրունի 2, Ղազար Յարութ. 2, Նեշէս Մելքոն. հղարդ 4, Յովհան Ս. 50, Աւետիս Գրիգոր. 2, Սահակ Մանուկ. 2, Սարգիս Սարքեան 2, Խաչիկ Ղազար. 5, Ղուկաս Պողոս. 5, Մելքոն Պաղտին 2, Մանուկ Շատի 2, Հազրօ Հէպօ. 2, Միքայէլ Ցանր. 3, Անիւծ Արծրունի 10, Յակոբ Յովհ. 2, Գալուստ Մինաս. 3, Պողոս Գրիգոր 5, Զալիկ Էմմի 1, Հանը Գուրբէթ 3, Մուրատ Կինս. 3, Հրանդ Տիմէոն 5, Ընկերակից մը 5, Մխիթար Ղազար. 2, Ոսկի Թորոսեան եւ Վրդանէս Փափազեան 8 Ֆր.: Գումար 247 Ֆր. 50 սանտ.:

Գուրկագի ենթակոմիտէն՝ Կիլիկիացի 100 լվ, Թորոսեան Ոմն Ա. թիւ 1՝ 36. 5, Ոմն Սֆ 30, Մկրտիչ Յարութ. Խաչիկ Վարդան., Անդրէաս մանուկ., Մկրտիչ Խաչիկ 25-ական Սամանի Թաթոս. 21, Կարապետ Խաչիկ., Առաքել Պողոս., Աբրամ Խաչիկ., Տօնիկ Ղազար., Թորոս մարտիկ Պետրոս Խաչիկ., Գրիգոր Բարդամ., Սահակ Աբրահամ. 20. 60-ական, Աւետիս Կարապետ. 20. 30, Յովհ. Յակոբ. 20. 15, Մուշեղ Ալագ., Խաչիկ Խաչիկեան, Գրիգոր Մկրտ., Աւետիս Վարդան., Բոնարէն, Աւետիս Գրիգ., Գեւորգ Բարդղ., Ոմն Ա. Մ., Ոմն Տ. Մանուկ Սողոմոն. 20-ական, Պողոս Տէրտէր. 15, Այտոնի հոյ. եղբ. 13, Յովհ. Թառ., Յակոբ մալ., Զօլօ Կարապ., Կարապետ Պետր., Գէորգ Մելգ., Հազրէ Մովս., Օհանէս Աղբար., Մարտիրոս Պետր., Փաւլոս Բարս., Խաչիկ Մարգ., Յովսէփ Զազար., Եփրատ. Պետրոս Սանտոր., Ալէքսան օլ., Պող Աւետ., Սահակ Սարգ., Արամ Սարգ., Պողոս Մարտ., Մանուկ Յարութ., Ոմն ս. ր. ք., Խաչիկ Ղղպօյ., Օհան Պող., Մուրատ Սահ., Մինաս Ցանկ., թիւ 4, Նշան եւ Սարգիս, Միքայէլ Խաչ. Հաւաքարծում Յակ., Գաբրիէլ Հլօյ., Մովսէս Մատ., Ստեփան Բարս., Օհան Դաւիթ., Գալուստ Ունձ., Մինաս Ղազ.. Մ. Հ. 10-ական, Գարնապետ Բարդ. 8, Յարութիւն Տօնիկ. 8, Պետրոս Մանուկ 8, Աւետիս Վարդ. 7, Յակոբ Ղազ. 7, Սերոբ Կիրակոս, Կարապետ Խաչ., Կասպ Աստուր., Յովհ. Մինաս., Գէորգ Վարդան. 6-ական, Օհան Տօն. 5. 15, Աւէսար Մուշեղ, Յակոբ Սարգ., Աբրահամ Մկրտ., Յովհ. Մարտաս, Սմբատ Մովսէս., Սիրան, Միքայէլ Յարութ., Վարդահամ Վարդ., Յարութիւն Սարգ., Կանանապետ Մկրտ., Մկրտիչ Մուրատ., Միսիթար Յովհ.,—Երուանդ Տօնիկ.,—Յակոբ Էրանոս., Թառուկ Ղուրշուտ., Մկրտիչ Յարութ., Վ. Շահ., Ստեփան Հէլաթ., Սարգիս Պաղտաս., Մարտիրոս Աքրահամ., Մանուկ Սուրիաս., Մկրտիչ Աղրտ., Գանապար Առաքել, Մուրատ Թոր., Միսակ Սուլթ., Պետրոս Տեմիրճ., Ոմն թիւ 7, Յարութիւն Վարդապետ., Մարտիկ Գեւորգ., Մանրկ Աւետիս, Աքրահամ Գալուստ., Խաչիկ Աստուր., Յարութիւն Զաւուշ, Գրիգոր մանուկ., Էրանոս Արսէն., Գանապար Սրապ., Ջնոս մանուկ, Ալագ Յոհան., Մովսէս Ստեփ., Յարութիւն Դանիէլ., Հէրոն Հովիկ., Գէորգ մանուկ., Ա. Ջ. Դ. Ե. Զ. 5-ական, Հլիպ Մարտիկ., Կուլ Մովս., Շահին Գրիգ., Գաբրիէլ Թումաս., Մանուկ Ղազ. 4-ական, Աստղր Յակոբ., Մարտիկ Աղաման., Ոսկիան Աղաման., Գրիգոր Խրաշ., Ոմն Զհանանէս Հովիկ., Ղազար Ղրոյ, Ոմն թիւ 2, Ոմն թիւ 5, Ոմն թիւ 4՝ 3-ական, Յակոբ Գրիգոր 2. 50, Ոմն ձ. 2. 50, Պողոս Մկրտչ., Հայաստանի ծնողուկ, Երկրաթազրօ, Մանուկ Կարապ., Հրանդ, Մկրտիչ Տօնապ., Թորոս Աղբր., Յակոբ Թոմոս., Մարտիրոս Վանցի, Խաչիկ Շահին., Օհաննէս Կարապետ., Սարգիս Վարդ., Ստեփան Կարապետ., Խաչատուր, Քերովբէ Դանիէլ., Թորոս Զուլաք. 2-ական, Հաւաքարծում Օհանն. 1. 40, Արմենակ Սիմոն., Յարութիւն Ըսքէճ., Երեմիա Պէնլ., Օհաննէս Ցէմիրճ., Տօնիկ Մարկ., Մարտիրոս Գուլամ., Խաչատուր Յարութ. 1-ական Ղէմ: Գումար 1508 լվ եւ 85 սանտիմ:

Սուլինայի զինւոր. երեք խմբերէ 1903 նոյեմբ. 10-ին.—

„Արամ" խմբէն՝ Խոսրով 6 Ֆրանք, Հայկ 7, Աստղ 20, Հաւատն 10, Սեպուհ 5, Կարօ 5, Մնաց 1. 50, Ճարտար 5, Ռուբէն 5, Քար 2 Ֆր.: „Գայլ" խմբէն՝ Գուրգէն, Գազարով, Արամ, Գարեգին, Ասպետ 5-ական Ֆր., Արծրունի 3, Օտնիկ 2, Մալոեան 2 Ֆր.: „Արարատ" խմբէն՝ Ասպետ, Թաթուլ, Պարգեւ, Վահրամ, Կարմիր 5-ական Ֆր., Վահրամ, Բարեսէր, Ճրագ, Վազգէն 2-ական: Գումար 116 Ֆրանք 50 սանտիմ:

Պուլբէշէն՝ Առաքել Գրիգոր., Անդրէաս Թոմաս., Գաբրիէլ Գրիգ., Եղուարդ 10-ական Ֆրանք, Ընդ. Քէչէեան., Գր. Խաչատրեան, Բերայի, Արաքելեան, Արշակ Կարապետ, Կ. Կիւրեղ, Սեդրակ Առաքել, Սէրգիս, Սարգիս Յովհաննէս., Գ. Ադամ, Ծգիպտացի, Արայ, Աբր. մեր., Համբարձում Յովհան., Տիգրան Գրիգ., Ոմն, Ոմն, Զայն, Հայ մը, Սարգիս Եղիայ, Սեդրակ Թօմաճան, Արտաշէս Գրիգ., Արշակունի, Կարապ. Պարտիզակցի, Լուսին 5-ական, Հրիպսիմէ Քէջ. 7, Նեկտար Մանուկ. 10, Խաչիկ Կարապետ. 4, Խաչիկ Գրիգ. 4, Վահր. Գրամ., Ա. Աբեան., Նշան Սարգ., Տիգրան Պէշիկ. 3-ական, Ղրիա Պ. 2. 45, Յովհ. Թաղւոր., Միհրդատ Հայրապ., Ա. Շ., Վ. Սագունի, Գ. Մ., Մարգարիտ Եփրեմ, Կարնամետ Շնարարճ., Արշակ Տիգրան, Գիւզանդ, Տիգրան Ռուսմուրցի, Կ. Հիւսիս., Վաղարշակ Յակոբ, Ս. Ն., Պողոս ճին., Զնիկ, Նիշան Այվազ, Մարտիկ Փիլիպպոս, Ուրֆացի, Կայծակ, Արտ. Տէմիրեան, Մրկոր Յակոբ., Պանդուխտ, Միր Ղազար, Միսակ Յակոբ., Միրզ Դաւիթեղլու, Գր. Գարեգին., Կասպուրպկանցի, Փիլիպպոս Ղուկաս, Սուր, Սանոլ, Ստեփան Յրմեան., Պոլոդեանեան, Առաքել 2-ական, Ոմն, Ղրիա, Մամբրէ, Գաբրիէլ Թօլուզ, Խաչիկ Պաղտասար., Միքայէլ Մինաս., Վահան Զիլինկ., Հանի Արթին, Նշան Սարգիս, Աստղիկ Ծգիպտացի, Աբրհ. Աբրահամեան., Պալոբեան, Նաշիր, Մ. Շահին., Ա. Կիւրեղ., Մկրտչ Գասպար, Նիկոլ, Մաթպթիայ Գաբրիէլ., Կ. Թ. Հանի Մարգիս 1-ական Ֆրանք:

„Վազգէն" խումբ՝ Երկաթ, Գայլ, Անիւծ, Անդրանիկ, Հրաշ 1-ական Ֆր., „Զէյթունի" խումբ՝ Վա իր 5 Ֆր., Ստ. Յովհաննեան, Գագիկ Սէրվարդ. 4-ական, Ն. Խաչատ., Գ. Գէորգ., Յ. Կիւրեղ. 3-ական, Երկաթ, Ս. Յակոբ., Զ. Ն 2-ական, Ն. Ս..., Տէր Ղազարեան, Արծրուն Գամարակցի, Ա. Ն., Պարոյր 1-ական Ֆր., „Ասորանիկ" խումբ՝ Արտաշ 3 Ֆր., Զարար 3, Աղբսան Ս. 2, Գ. Պէնկիկ 1. Գէրն, Հրանդ, Յակոբ 1-ական Ֆր., „Նէրուզ" խումբ՝ Մեծ-Աղբար 10 Ֆր., Ն. Մ., Օ. Մ., Պ. Խաչատուր, Արշակունի հանդ 5-ական, Պուլտանեան 2, Երկու ընկերներ, Գ. Ոսկէն 2, Պ. Արարատ, Գրիգոր 3-ական Ֆր., „Էդեմի" խումբ՝ Ան. Գրիգորեան 1, Զրգ 3, Աղէմեան 3, Պ. Նշան 2, Միքայէլ Մինաս. 2, Սար Գրիգորեան 1, Գր. Արաքելեան 4, Սոր 3, Մ. Ստեփանեան 4 Ֆր. Յարութիւն 4 Ֆրանք:

ԿԱՅԾԻ կոմիտէն՝

Հին եւ նոր նամսակներուն 31 յունուարի 1904 Կ.:

Քաւոկան խմբ. 119 ռուբլի, Նէմրուտ խմբ. 140. 40, Անիւծ խմբ. 225, Դիսպակ խմբ. 57, Խնամատար խմբ. 252. 50, Նոր խմբ. 123, Տաժակ խմբ. 66. 50, Կայծակ խմբ. 50, եւս 50, եւս 45, եւս 39 ռուբլի Գումար 1165 ռուբլի 40 կոպէկ:

Մեր խմբագրութիւնն՝ հասցէն՝
Rédaction du „Droschak", Genève (Suisse)